

نبذة في العقيدة الإسلامية (شرح
أصول الإيمان) (الحرمين والجمعية)

Իսլամական դավանանքի
հակիրճ շարադրանք

Իսլամական դավանանքի հակիրճ շարադրանք

Մուհամմադ իբն Սալիհ
ալ-Ռուսայմին

Իսլամական դավանանքի հակիրճ շարադրանք

Արժանապատիվ Շեյխ Գիտունի գրչով
Մուհամմադ իբն Սալիհ ալ-Ռուսայմին
Թող Ալլահը ների նրան, նրա ծնողներին և
բոլոր մուսուլմաններին

Ամենաբարեգութ, ամենաողորմած Ալլահի
անունով

Ներածություն

Իսկապես, ողջ գովաբանությունը Ալլահինն է,
մենք փառաբանում ենք Նրան, Նրանից ենք
օգնություն խնդրում, Նրանից ենք թողություն
խնդրում և ապաշխարում ենք Նրա առաջ, և
ապաստան ենք խնդրում Ալլահից մեր անձերի
չարիքներից և մեր գործերի
վատթարություններից: Ում Ալլահն
առաջնորդում է, նրա համար մոլորեցնող չկա, և
ում Նա մոլորեցնում է, նրա համար առաջնորդող
չկա: Եվ ես վկայում եմ, որ չկա ոչ մի
աստվածություն, որն արժանի է
երկրպագության, բացի Ալլահից, և Նա չունի
որևէ գործընկեր, և վկայում եմ, որ Մուհամմադը
Նրա ծառան է և Նրա առաքյալը, թող Ալլահը

օրինի նրան, նրա ընտանիքին, նրա ուղեկիցներին և նրանց, ովքեր բարեպաշտությամբ հետևել են նրանց, և առատ խաղաղություն պարգևի:

Իսկ այնուհետև: Միաստվածության գիտությունը ամենապատվավոր գիտությունն է, ամենավեհն իր արժեքով և ամենաանհրաժեշտը՝ ուսումնասիրության համար, քանի որ այն գիտություն է Բարձրյալ Ալլահի, Նրա անունների, հատկանիշների և Իր ծառաների հանդեպ ունեցած իրավունքների մասին, ինչպես նաև՝ դեպի Բարձրյալ Ալլահը տանող ճանապարհի բանալին և Նրա շարիաթների հիմքը:

Այդ իսկ պատճառով, բոլոր առաքյալները միասնական էին դեպի այն կոչ անելու գործում: Ալլահն ասաց.

﴿وَمَا أَرْسَلْنَا مِنْ قَبْلِكَ مِنْ رَسُولٍ إِلَّا نُوحِي إِلَيْهِ أَنَّهُ لَا إِلَهَ إِلَّا أَنَا فَاعْبُدُونِ 25﴾

«Քեզնից առաջ Մենք որևէ առաքյալ չենք ուղարկել, ում չհայտնեինք այս պատգամը. «Չկա ուրիշ աստվածություն՝ բացի Ինձանից, ուստի երկրպագեցե՛ք Ինձ»»: [Անբիյա:25]

Եվ Բարձրյալը վկայեց Իր իսկ Միակության մասին, և դրա մասին Նրա համար վկայեցին Նրա հրեշտակները և գիտության տերերը, Բարձրյալ Ալլահն ասաց.

﴿شَهِدَ اللَّهُ أَنَّهُ لَا إِلَهَ إِلَّا هُوَ وَالْمَلَائِكَةُ وَأُولُوا الْعِلْمِ قَانِمًا بِالْقِسْطِ لَا إِلَهَ إِلَّا هُوَ الْعَزِيزُ الْحَكِيمُ 18﴾

«Ալլահը, հրեշտակները և գիտության տերերը վկայում են, որ չկա աստված, բացառությամբ Նրանից, Ով արդարություն է հաստատում: Չկա աստված, բացառությամբ Նրանից՝ Հզորից, Իմաստունից»: [Ալ 'Իմրան:18]

Եվ քանի որ այսպիսին է Միաստվածության կարևորությունը, յուրաքանչյուր մուսլիմի պարտականությունն է հոգ տանել դրա մասին՝ ուսումնասիրելով, ուսուցանելով, խորհելով և այն որպես դավանանք ընդունելով, որպեսզի իր կրոնը կառուցի ճիշտ հիմքի վրա՝ վստահությամբ և հնազանդությամբ, և վայելի դրա պտուղներն ու արդյունքները:

Եվ Ալլահն է հաջողություն պարգևողը
Հեղինակ

Իսլամական կրոն

Իսլամական կրոնը. այն կրոնն է, որով Ալլահն ուղարկեց Մուհամմադին ﷺ, և որով եզրափակեց բոլոր կրոնները: Նա այն կատարյալ դարձրեց Իր ծառաների համար, դրանով ամբողջացրեց Իր շնորհը նրանց վրա և հավանեց այն որպես կրոն նրանց համար: Ուստի, ոչ ոքից չի ընդունվի որևէ այլ կրոն, բացի դրանից: Ամենաբարձրյալ Ալլահն ասել է.

﴿مَا كَانَ مُحَمَّدٌ أَبَا أَحَدٍ مِّن رِّجَالِكُمْ وَلَكِن رَّسُولَ اللَّهِ وَخَاتَمَ النَّبِيِّينَ ۚ وَكَانَ اللَّهُ بِكُلِّ شَيْءٍ عَلِيمًا ۝ 40﴾

«Մուհամմադը ձեր տղամարդկանցից ոչ մեկի հայրը չէր, այլ նա Ալլահի Առաքյալն է և վերջին

մարգարեն, ով կնքեց մարգարեության դուռը, և Ալլահն ամեն ինչի նկատմամբ Ամենագետ է»: [Ալ-Ահգար:40]

Ալլահն ասաց.

﴿...الْيَوْمَ أَكْمَلْتُ لَكُمْ دِينَكُمْ وَأَتِمَمْتُ عَلَيْكُمْ نِعْمَتِي وَرَضِيتُ لَكُمُ الْإِسْلَامَ دِينًا...﴾

«...Այսօր ես կատարելագործեցի ձեզ համար ձեր կրոնը, լիակատար դարձրի Իմ շնորհը ձեզ վրա և հավանություն տվեցի Իսլամին՝ որպես ձեր կրոն...»: [Ալ-Մաիդա:3]

Ալլահն ասաց.

﴿إِنَّ الدِّينَ عِنْدَ اللَّهِ الْإِسْلَامُ...﴾

«Իրոք, Ալլահի կրոնը հանդիսանում է Իսլամը...» [Ալ 'Իմրան:19]:

Ալլահն ասաց.

﴿وَمَنْ يُبْتَغِ غَيْرَ الْإِسْلَامِ دِينًا فَلَنْ يُقْبَلَ مِنْهُ وَهُوَ فِي الْآخِرَةِ مِنَ الْخَسِرِينَ 85﴾

«Իսկ ով իսլամից բացի այլ կրոն փնտրի, այն երբեք չի ընդունվի նրանից, և նա հանդերձյալ աշխարհում կլինի կորուստ կրողների շարքում»:
[Ալ 'Իմրան:85]:

Եվ Ալլահը՝ Ամենաբարձրյալը, պարտադրել է բոլոր մարդկանց, որ դավանեն այն՝ որպես կրոն հանուն Նրա, և ասաց՝ դիմելով Ալլահի Առաքյալին, Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա.

﴿قُلْ يَا أَيُّهَا النَّاسُ إِنِّي رَسُولُ اللَّهِ إِلَيْكُمْ جَمِيعًا الَّذِي لَهُ مُلْكُ السَّمَوَاتِ وَالْأَرْضِ لَا إِلَهَ إِلَّا هُوَ يُحْيِي وَيُمِيتُ فَآمِنُوا بِاللَّهِ وَرَسُولِهِ النَّبِيِّ الْأُمِّيِّ الَّذِي يُؤْمِنُ بِاللَّهِ وَكَلِمَتِهِ وَاتَّبِعُوهُ لَعَلَّكُمْ تَهْتَدُونَ 158﴾

«Ասա. «Ո՛վ մարդիկ, ես Ալլահի Առաքյալն եմ՝ ուղարկված ձեզ բոլորիդ: Նրան է պատկանում երկինքների և երկրի թագավորությունը: Չկա ոչ մի աստվածություն, որն արժանի է երկրպագության, բացի Ալլահից: Նա է կենդանություն պարգևողը և մահ պատճառողը: Ուստի հավատացե՛ք Ալլահին և Նրա Առաքյալին՝ անգրագետ մարգարեին ﷺ, որը հավատում է Ալլահին և Նրա Խոսքերին, և հետևեցե՛ք նրան, որպեսզի դուք առաջնորդվեք ուղիղ ճանապարհով»»: [Ալ-Ա'րոֆ:158]

Եվ Սահիհ Մուսլիմում Աբու Հուրեյրայից (թող Ալլահը գոհ լինի նրանից) հաղորդվում է, որ Մարգարեն (Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա) ասաց.

«وَالَّذِي نَفْسُ مُحَمَّدٍ بِيَدِهِ لَا يَسْمَعُ بِي أَحَدٌ مِنْ هَذِهِ الْأُمَّةِ يَهُودِيٍّ وَلَا نَصْرَانِيٍّ، ثُمَّ يَمُوتُ وَلَمْ يُؤْمِنْ بِالَّذِي أُرْسِلْتُ بِهِ إِلَّا كَانَ مِنْ أَصْحَابِ النَّارِ».

«Երգվում եմ Նրանով, Ում ձեռքում է Մուհամմադի հոգին, այս համայնքից յուրաքանչյուր ոք՝ հրեա թե քրիստոնյա, ով լսի իմ մասին, ապա մահանա՝ չհավատալով նրան, ինչով ես ուղարկվել եմ, անկասկած կլինի Դժոխքի բնակիչներից»¹:

Նրա հանդեպ հավատքը նրա բերածը ճշմարիտ համարելն է՝ ընդունելով և

¹ Բերված է Մուսլիմի կողմից՝ «Հավատք» գրքում, «Պարտադիր հավատքը մեր մարգարե Մուհամմադի (Ալլահի խաղաղությունը և օրհնությունը նրան) առաքելությանը՝ ուղղված բոլոր մարդկանց, և նրա կրոնով մյուս կրոնների չեղարկումը» բաժնում, (հաղ. №153):

հնազանդվելով, և ոչ թե պարզապես ճշմարիտ համարելը: Այդ իսկ պատճառով Աբու Տալիբը հավատացյալ չէր Առաքյալի ﷺ հանդեպ, չնայած ճշմարիտ էր համարում այն, ինչով նա եկել էր, և վկայում էր, որ դա լավագույն կրոնն է:

Իսլամական կրոնը պարունակում է նախորդ կրոնների բոլոր շահերը և առանձնանում է դրանցից նրանով, որ համապատասխանում է բոլոր ժամանակներին, վայրերին և ազգերին: Ամենակարող Ալլահն ասաց՝ դիմելով Իր մարգարեին.

(وَأَنزَلْنَا إِلَيْكَ الْكِتَابَ بِالْحَقِّ مُصَدِّقًا لِّمَا بَيْنَ يَدَيْهِ مِّنَ الْكِتَابِ وَمُهَيِّمًا عَلَيْهِ...)

«Եվ Մենք իջեցրել ենք քեզ այս Գիրքը ճշմարտությամբ՝ որպես հաստատում իրենից առաջ եղած Սուրբ Գրքերի և որպես վերահսկող դրանց վրա...»: [Ալ-Մաիդա:48]

Եվ դրա՝ յուրաքանչյուր ժամանակի, վայրի և ազգի համար հարմար լինելու իմաստն այն է, որ դրան հավատարիմ մնալը չի հակասում ազգի շահերին որևէ ժամանակ կամ վայրում, այլ դա նրա բարօրությունն է, և դա չի նշանակում, թե այն ենթակա է յուրաքանչյուր ժամանակի, վայրի և ազգի, ինչպես ոմանք կցանկանային:

Իսլամական կրոնը ճշմարտության կրոնն է, և Ամենաբարձրյալ Ալլահը երաշխավորել է նրան, ով ամուր հավատարիմ է մնում դրան, որ Նա հաղթանակ կպարգևի նրան և գերիշխող

կդարձնի մյուսների նկատմամբ:
Ամենաբարձրյալ Ալլահին ասել է.

﴿هُوَ الَّذِي أَرْسَلَ رَسُولَهُ بِالْهُدَىٰ وَدِينِ الْحَقِّ لِيُظْهِرَهُ عَلَى الدِّينِ كُلِّهِ وَلَوْ كَرِهَ الْمُشْرِكُونَ 9﴾

«Նա է, Ով Իր Առաքյալին ﷺ ուղարկեց ուղիղ առաջնորդությամբ և ճշմարիտ հավատով, որպեսզի այն բարձրացնի և գերիշխեցնի բոլոր հավատքների վրա, որքան էլ որ բազմաստվածներին դա անհաճո լինի»։ [Աս-Սաֆֆ:9]

Ալլահին ասաց.

﴿وَعَدَ اللَّهُ الَّذِينَ ءَامَنُوا مِنكُمْ وَعَمِلُوا الصَّالِحَاتِ لَيَسْتَخْلِفَنَّهُمْ فِي الْأَرْضِ كَمَا اسْتَخْلَفَ الَّذِينَ مِن قَبْلِهِمْ وَلَيُمَكِّنَنَّ لَهُمْ دِينَهُمُ الَّذِي ارْتَضَىٰ لَهُمْ وَلَيُبَدِّلَنَّهُم مِّن بَعْدِ خَوْفِهِمْ أَمْنًا يَعْبُدُونَنِي لَا يُشْرِكُونَ بِي شَيْئًا وَمَن كَفَرَ بَعْدَ ذَلِكَ فَأُولَٰئِكَ هُمُ الْفَاسِقُونَ 55﴾

«Ալլահը խոստացել է ձեզանից նրանց, ովքեր հավատացել են և բարեպաշտ գործեր են կատճարել, որ նրանց իշխանություն կտա երկրի վրա, ինչպես իշխանություն էր տվել նրանցից առաջ եղածներին, կամրապնդի նրանց համար այն կրոնը, որը հավանության է արժանացրել, և նրանց վախը կփոխարինի անվտանգությամբ: Նրանք Ինձ կերկրպագեն՝ Ինձ հետ ոչինչ չհավասարեցնելով: Իսկ ով դրանից հետո անհավատ կդառնա, ապա նրանք են մեղսագործները»։ [Ան-Նուր:55]

Իսլամական կրոնը՝ դավանանք է և օրենք, քանզի այն կատարյալ է իր դավանանքի և օրենքների մեջ:

1. Պատվիրում է երկրպագել միայն Ամենաբարձրյալ Ալլահին և արգելում է Նրան զուգընկեր դարձնելը:

2. Պատվիրում է ճշմարտախոսություն և արգելում է սուտը:

3. Այն պատվիրում է արդարություն և դատապարտում է անարդարությունը: Արդարությունը նույնանմանների միջև հավասարությունն է, իսկ տարբերվողների միջև՝ տարբերակումը: Արդարությունը բացարձակ հավասարություն չէ, ինչպես ոմանք պնդում են՝ ընդհանրացնելով, թե «Իսլամը հավասարության կրոն է»: Քանզի տարբերների միջև հավասարությունը անարդարություն է, որը Իսլամը չի քարոզում, և այն գործողը գովասանքի արժանի չէ:

4. Պատվիրում է հավատարմությունը (ավանդի պահպանումը) և դատապարտում է դավաճանությունը:

5. Պատվիրում է հավատարիմ լինելը (ուխտի ու խոստման պահպանումը) և արգելում է դավաճանական խախտումը:

6. Հրամայում է սիրալիր լինել ծնողների նկատմամբ և արգելում է անհնազանդ լինել նրանց:

7. Պատվիրում է պահպանել բարեկամական կապերը և արգելում է դրանք խզել:

8. Պատվիրում է բարի լինել հարևանների նկատմամբ և արգելում է նրանց հետ վատ վարվելը:

Ընդհանուր առմամբ՝ (Իսլամը) հրամայում է ամեն առաքինի բարք և արգելում է ամեն ցածր բարք: Այն հրամայում է ամեն բարի գործ և արգելում է ամեն վատ գործ:

Ալլահն ասաց.

﴿إِنَّ اللَّهَ يَأْمُرُ بِالْعَدْلِ وَالْإِحْسَنِ وَإِيتَايَ ذِي الْقُرْبَىٰ وَيَنْهَىٰ عَنِ الْفَحْشَاءِ وَالْمُنْكَرِ وَالْبَغْيِ يَعِظُكُمْ لَعَلَّكُمْ تَذَكَّرُونَ ٩٠﴾

«Արդարեւ, Ալլահը պատվիրում է արդարություն, բարություն և օգնություն ազգականներին, և արգելում է անպարկեշտությունը, մերժելին և անիրավությունը: Նա խրատում է ձեզ, որպեսզի հիշեք»: [Ան-Նահլ:90]

Իսլամի հիմնասյուները

Իսլամի հիմնասյուները. դրա հիմքերը, որոնց վրա այն կառուցված է հինգն են: Հիշատակված է նրանում, ինչը հաղորդել է Իբն Ումարը (թող Ալլահը գոհ լինի նրանցից) Մարգարեից ﷺ, որ նա ասել է.

«بُنِيَ الْإِسْلَامُ عَلَى خَمْسَةٍ: عَلَى أَنْ يُؤَدَّ اللَّهُ - وَفِي رَوَايَةٍ عَلَى خَمْسٍ -: شَهَادَةٌ أَنْ لَا إِلَهَ إِلَّا اللَّهُ، وَأَنَّ مُحَمَّدًا عَبْدُهُ وَرَسُولُهُ، وَإِقَامُ الصَّلَاةِ، وَإِيتَاءُ الزَّكَاةِ، وَصِيَامُ رَمَضَانَ، وَالْحَجَّ»

«Իսլամը կառուցված է հինգի վրա. Ալլահին միակ դավանելու վրա (իսկ մեկ այլ հաղորդման մեջ՝ հինգ սյուների վրա). վկայությունն այն մասին, որ չկա ոչ մի աստվածություն, որն արժանի է երկրպագության, բացի Ալլահից, և որ Մուհամմադը Նրա ծառան ու Առաքյալն է, աղոթքի կատարումը, զաքաթի տալը, Ռամադանի ծոմապահությունը և հաջջը»։ Եվ մի մարդ ասաց. «Հաջջը և Ռամադանի ծոմը՞»։ Նա ասաց.

«لَا، صِيَامُ رَمَضَانَ، وَالْحُجُّ»

«Ո՛չ, Ռամադանի ծոմապահությունը և Հաջջը»
Հենց այսպես են լսել դա Մարգարեից ﷺ¹

1. Ինչ վերաբերում է այն վկայությանը, որ չկա աստվածություն բացի Ալլահից, և որ Մուհամմադը Նրա ծառան ու Առաքյալն է, ապա այն լեզվով արտահայտված հաստատուն համոզմունքն է, կարծես թե մարդն իր հաստատակամությամբ դրա ականատեսն է։ Իսկ այս վկայությունը մեկ միասնական սյուն է դարձվել՝ չնայած վկայվածի բազմազանությանը։

Քանզի Առաքյալը ﷺ Ալլահի կողմից պատգամաբեր է, ուստի նրա ծառայության և առաքելության մասին վկայությունը «չկա

¹ Հաղորդել են ալ-Բուխարին՝ «Հավատք» գրքում, թիվ (8), և Մուսլիմը՝ «Հավատք» գրքում, «Մարգարեի խոսքը՝ «Իսլամը հիմնված է հինգի վրա»» բաժնում, թիվ (16):

աստվածությունն բացի Ալլահից» վկայության լրացումն է:

Կամ էլ, որովհետև այս երկու վկայություններն են գործերի վավերականության և ընդունելիության հիմքը, քանզի ոչ մի արարք ճշմարիտ և ընդունելի չէ առանց Բարձրյալ Ալլահի հանդեպ անկեղծության և Նրա Առաքյալին (Աստծո խաղաղությունը եւ օրհնությունը նրան) հետևելու:

Ալլահի հանդեպ անկեղծությամբ է իրականանում «չկա աստվածություն բացի Ալլահից» վկայությունը, իսկ Ալլահի Առաքյալին հետևելով՝ իրականանում է «Մուհամմադը Նրա ծառան է և Նրա առաքյալը» վկայությունը:

Այս մեծագույն վկայության պտուղներից է՝ սրտի և հոգու ազատագրումը արարածների գերությունից և առաքյալներից բացի ուրիշներին հետևելուց:

2. Իսկ աղոթքի կատարումը Ամենաբարձրյալ Ալլահին երկրպագելն է՝ այն իրականացնելով ճշգրտորեն և ամբողջությամբ՝ իր սահմանված ժամանակներին և ձևերով:

Դրա պտուղներից են՝ հոգու խաղաղությունը, աչքի բերկրանքը և զերծ մնալը անպարկեշտությունից ու արատավորից:

3- Իսկ Չաքաթ տալը՝ Ամենակարող Ալլահին երկրպագություն է՝ զաքաթի ենթակա ունեցվածքից պարտադիր չափաբաժինը տրամադրելով դրա իրավունքն ունեցողներին:

Դրա պտուղներից են՝ հոգու մաքրումը արատավոր բարքից (ժլատությունից) և Իսլամի ու մուսուլմանների կարիքների բավարարումը:

4- Իսկ Ռամադանի ծոմապահությունը՝ դա Ալլահին երկրպագելն է՝ Ռամադանի ցերեկը ծոմը խախտող բաներից զերծ մնալով:

Եվ դրա պտուղներից է՝ հոգին սանձելը՝ հրաժարվելու սիրելի բաներից՝ որոնելով Ամենակարող և Մեծ Աստծո բարեհաճությունը:

5- Հաջջը՝ Ամենաբարձրյալ Ալլահին երկրպագությունն է՝ դեպի Սուրբ Տուն ուխտագնացություն կատարելով՝ Հաջջի ծեսերը կատարելու համար:

Դրա արդյունքներից է հոգին կոփելը՝ նյութական և ֆիզիկական ջանքեր գործադրելով Ալլահին հնազանդվելու համար: Այդ իսկ պատճառով Հաջջը համարվում է Ջիհադի տեսակ՝ Ալլահի ճանապարհին:

Եվ այս պտուղները, որոնք մենք հիշատակեցինք այս հիմքերի համար, և այն, ինչ չենք հիշատակել, ազգը դարձնում են մաքուր, անարատ իսլամական համայնք, որը դավանում է Ալլահի ճշմարիտ կրոնը և արարածների հետ վարվում է արդարությամբ ու ճշմարտությամբ: Քանզի Իսլամի մյուս օրենքները բարեկարգվում են այս հիմքերի բարեկարգությամբ, և համայնքի վիճակը բարեկարգվում է իր կրոնական գործերի բարեկարգությամբ: Եվ այն իր վիճակի բարեկարգությունից կորցնում է այնքան, որքան

կորցրել է իր կրոնական գործերի քարեկարգությունից:

Իսկ ով կամենա դրա պարզաբանումը, թող կարդա Բարձրյալի խոսքը.

﴿وَلَوْ أَنَّ أَهْلَ الْقُرَىٰ ءَامَنُوا وَاتَّقَوْا لَفَتَحْنَا عَلَيْهِم بَرَكَاتٍ مِّنَ السَّمَاءِ وَالْأَرْضِ وَلَٰكِن كَذَّبُوا فَأَخَذْنَاهُم بِمَا كَانُوا يَكْسِبُونَ 96 أَفَأَمِنَ أَهْلُ الْقُرَىٰ أَن يَأْتِيَهُمْ بَأْسُنَا بَيِّنًا وَهُمْ نَائِمُونَ 97 أَوَأَمِنَ أَهْلُ الْقُرَىٰ أَن يَأْتِيَهُمْ بَأْسُنَا ضُحًى وَهُمْ يُلْعَبُونَ 98 أَفَأَمِنُوا مَكْرَ اللَّهِ فَلَا يَأْمَنُ مَكْرَ اللَّهِ إِلَّا الْقَوْمُ الْخَاسِرُونَ 99﴾

«Եվ եթե բնակավայրերի ժողովուրդը հավատար և աստվածավախ լիներ, ապա Մենք նրանց համար կբացեինք երկնքի և երկրի բարիքները: Սակայն նրանք սուտ համարեցին, ուստի Մենք նրանց պատժեցինք այն ամենի համար, ինչ նրանք վաստակում էին»: 96

«Մի՞թե քաղաքների բնակիչներն ապահով են, որ Մեր պատիժը կհասնի նրանց գիշերով, մինչ նրանք քնած են»: 97

«Կամ մի՞թե քաղաքների բնակիչներն ապահով են Մեր պատժի հասնելուց առավոտյան, մինչ նրանք զվարճանում են»:

«Մի՞թե նրանք կարծում են, թե ապահով են Ալլահի խորամանկությունից: Բայց Ալլահի խորամանկությունից իրենց ապահով են զգում միայն կորուստ կրողները»: [Ալ-Ա'րոֆ:96-99]:

Եվ թող նա դիտարկի նախորդների պատմությունը, քանզի պատմությունը խրատ է քանականություն ունեցողների համար և իմացություն՝ նրա համար, ում սրտի վրա վարագույր չի իջել: Եվ Ալլահից է օգնությունը:

Իսլամական դավանանքի հիմունքները

Իսլամական կրոնը, ինչպես արդեն պարզաբանել ենք, դավանանք է և օրենք, և մենք անդրադարձել ենք նրա որոշ օրենքներին և նշել ենք նրա հիմնասյուները, որոնք համարվում են նրա օրենքների հիմքը:

Իսկ իսլամական դավանանք ի հիմքերն են՝ հավատն Ալլահին, Նրա հրեշտակներին, Նրա Գրքերին, Նրա Առաքյալներին, Վերջին օրվան և կանխորոշմանը՝ լինի այն բարի, թե՛ չար:

Եվ այս հիմքերի մասին են վկայում Ալլահի Գիրքը և Նրա Մարգարեի ﷺ Սուննան:

Եվ Ալլահն Իր գրքում ասում է.

﴿لَيْسَ الْبِرَّ أَنْ تُولُوا وَجُوهَكُمْ قِبَلَ الْمَشْرِقِ وَالْمَغْرِبِ وَلَكِنَّ الْبِرَّ مَنْ آمَنَ بِاللَّهِ وَالْيَوْمِ الْآخِرِ وَالْمَلَائِكَةِ وَالْكِتَابِ وَالنَّبِيِّينَ...﴾

«Բարեպաշտությունը ոչ թե ձեր դեմքը դեպի արևելք կամ արևմուտք դարձնելն է, այլ իսկական բարեպաշտը նա է, ով հավատում է Ալլահին, Վերջին օրվան, հրեշտակներին, Գրքին և մարգարեներին...» [Սուրա Ալ-Բակարա, այաթ 177] Եվ նա ասում է ճակատագրի վերաբերյալ.

﴿إِنَّا كُلَّ شَيْءٍ خَلَقْنَاهُ بِقَدَرٍ 49 وَمَا أَمْرُنَا إِلَّا وَجْدَةٌ كَلَمْحٍ بِالْبَصَرِ 50﴾

«Անշուշտ, Մենք ամեն ինչ ստեղծել ենք չափով:

Եվ Մեր հրամանը միայն մեկն է՝ աչքի ականթարթի պես» (50): [Ալ-Կոմար:49-50]:

Եվ Ալլահի Առաքյալի ﷺ Սուննայում Մարգարեն ﷺ ասում է՝ պատասխանելով

Ջիբրայիլին(Գաբրիելին), երբ նա հարցրեց հավատքի մասին:

«الْإِيمَانُ: أَنْ تُؤْمِنَ بِاللَّهِ، وَمَلَائِكَتِهِ، وَكُتُبِهِ، وَرُسُلِهِ، وَالْيَوْمِ الْآخِرِ، وَتُؤْمِنَ بِالْقَدَرِ: خَيْرُهُ وَشَرُّهُ».

«Հավատքն այն է, որ հավատաս Ալլահին, Նրա հրեշտակներին, Նրա գրքերին, Նրա առաքյալներին, Վերջին օրվան, և հավատաս ճակատագրին՝ դրա լավին և չարին»¹:

Հավատք Բարձրյալ Ալլահին

Իսկ հավատքը Ալլահի հանդեպ ներառում է չորս սկզբունք՝

Առաջին սկզբունքը՝ Հավատք Ալլահի գոյությանը:

Նրա՝ Ամենաբարձրյալի, գոյության մասին վկայում են՝ բնածին էությունը, բանականությունը, աստվածային օրենքը և զգայարանները:

Իսկ ինչ վերաբերում է բնագոյի ապացույցին Նրա գոյության մասին (Փա՛ռք Նրան), ապա յուրաքանչյուր արարած ստեղծվել է իր Արարչի հանդեպ հավատքով՝ առանց նախնական մտածողության կամ ուսուցման, և չի շեղվում այս բնագոյի պահանջից, բացի նրանից, ում սրտում հայտնվել է մի բան, որը նրան շեղում է դրանից: Ըստ Մարգարեի (խաղաղություն և օրհնություն լինի նրան) խոսքի.

¹ Հաղորդել է Մուսլիմը, Հավատքի գիրք, համար (8), Աբու Դաուդ՝ Սուննայի գիրք, Գուլխ՝ ճակատագրի մասին, համար (4695):

«مَا مِنْ مَوْلُودٍ إِلَّا يُولَدُ عَلَى الْفِطْرَةِ، فَأَبَوَاهُ يُهَوِّدَانِهِ أَوْ يُنَصِّرَانِهِ أَوْ يُمَجِّسَانِهِ».

«Յուրաքանչյուր նորածին ծնվում է մաքուր բնության՝ ֆիտրայով, ապա նրա ծնողներն են նրան դարձնում հուդայական, քրիստոնյա կամ զրադաշտական»¹:

2- Իսկ Ամենակարող Աստծո գոյության բանական փաստարկն այն է, որ այս արարածները՝ թե՛ նախկին, թե՛ ներկա, պետք է ունենան մի Արարիչ, որը նրանց գոյություն է տվել, քանզի նրանք չեն կարող իրենք իրենց ստեղծել, ոչ էլ կարող են պատահականորեն գոյանալ:

Ինչ-որ բան ինքն իրեն չի ստեղծում, որովհետև մինչև իր գոյությունը այն ոչինչ է, ապա ինչպե՞ս կարող է ստեղծող լինել:

Եվ չի կարող պատահականորեն գոյություն ունենալ, որովհետև ամեն իրադարձություն պետք է ունենա իր ստեղծողը: Եվ քանի որ դրա գոյությունն այս հրաշալի համակարգով, ներդաշնակ համաչափությամբ և պատճառների ու դրանց հետևանքների, ինչպես նաև էակների միմյանց հետ ունեցած ամուր կապով կտրականապես բացառում է, որ դրա

¹ Հադորդել են ալ-Բուխարին՝ «Հուդարկավորություններ» գիրք, «Եթե տղան իսլամ ընդունի և մահանա, արդյո՞ք նրա համար աղոթք կատարվում է, և արդյո՞ք տղային իսլամ է ներկայացվում» գլուխ, համար (1292), և Մուլիմը՝ «Ճակատագիր» գիրք, «Յուրաքանչյուր նորածին ֆիտրայի վրա ծնվելու իմաստը, և անհավատների ու մուսուլմանների երեխաների մահվան վճիռը» գլուխ, համար (2658):

գոյությունը պատահականություն լինի, քանզի պատահականորեն գոյություն ունեցողն իր գոյության հիմքում համակարգ չունի, ապա ինչպե՞ս կարող է այն կանոնավոր լինել իր գոյատևման և զարգացման ընթացքում:

Եվ եթե այս արարածները չեն կարող իրենք իրենց ստեղծել, ոչ էլ պատահականորեն գոյանալ, ապա հաստատվում է, որ նրանք պետք է ունենան Արարիչ, և Նա Ալլահն է՝ աշխարհների Տերը:

Եվ Ալլահը Ատ-Տուր սուրայում հիշատակել է այս բանական ապացույցն ու անհերքելի փաստարկը: Ալլահն ասաց.

﴿أَمْ خُلِقُوا مِنْ غَيْرِ شَيْءٍ أَمْ هُمْ الْخُلُقُونَ 35﴾

«Միթե՞ նրանք ստեղծվել են ոչնչից, թե՞ իրենք են Ստեղծողները»: [Սուրա Տուր, այաթ 35] Այսինքն՝ նրանք չեն ստեղծվել առանց Ստեղծողի, ոչ էլ իրենք են իրենց ստեղծել, ուստի հաստատվում է, որ նրանց Ստեղծողը Ամենաբարձրյալ Ալլահն է: Այդ իսկ պատճառով, երբ Ջուրեյր իբն Մուտղիմը (թող Ալլահը գոհ լինի նրանից) լսեց առաքյալին (Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա) կարդալիս «Ատ-Տուր» սուրան, և նա հասավ այս այաթներին.

﴿أَمْ خُلِقُوا مِنْ غَيْرِ شَيْءٍ أَمْ هُمْ الْخُلُقُونَ 35 أَمْ خُلِقُوا السَّمَوَاتِ وَالْأَرْضَ بَلْ لَا يُوقِنُونَ 36 أَمْ عِنْدَهُمْ خَزَائِنُ رَحْمَتِ رَبِّكَ أَمْ هُمُ الْمُصْتَبِرُونَ 37﴾

«Մի՞թե՞ նրանք ստեղծվել են ոչնչից, թե՞ իրենք են Ստեղծողները:

Թե՞ նրանք են ստեղծել երկինքներն ու երկիրը: Այլ նրանք համոզված չեն: 36

Մի՞թե քո Տիրոջ զանձերը նրանց մոտ են, թե՞ նրանք են տիրապետողները»: 37 [Ատ-Տուր:35-37]

Եվ Ջուբեյրը, որն այն ժամանակ բազմաստվածապաշտ էր, ասաց. «Քիչ մնաց սիրտս թռչեր, և դա այն առաջին անգամն էր, երբ հավատքը հաստատվեց իմ սրտում»¹:

Եվ եկեք դա պարզաբանող մի օրինակ բերենք. եթե որևէ մեկը ձեզ պատմեր մի վեհաշուք պալատի մասին, որը շրջապատված է այգիներով, որոնց միջով հոսում են գետեր, լցված է կահույքով ու մահճակալներով և զարդարված է իր հիմնական ու լրացուցիչ բաղադրիչների ամենատարբեր զարդերով, և եթե նա քեզ ասեր, թե այս պալատը և նրա մեջ եղած կատարելությունն ինքն իրեն է ստեղծել, կամ այսպես պատահաբար է գոյացել՝ առանց ստեղծողի, դու կշտապեիր ժխտել ու հերքել դա և նրա խոսքը հիմարություն կհամարեիր: Դրանից հետո մի՞թե կարելի է կարծել, թե այս ընդարձակ տիեզերքը՝ իր երկրով, երկնքով, երկնային մարմիններով, իր վիճակներով և իր հրաշալի ու զարմանահրաշ համակարգով, ինքն իրեն է

¹ Հադորդել է ալ-Բուխարին՝ սուրա «Ատ-Տուր», թիվ (4854):

ստեղծել, կամ պատահականորեն է գոյացել՝ առանց Արարչի:

3- Իսկ Աստվածային օրենքի վկայությունը Բարձրյալ Ալլահի գոյության մասին այն է, որ բոլոր երկնային Գրքերը վկայում են այդ մասին, և որ դրանցում պարունակվող արդարացի դրույթները, որոնք ապահովում են արարածների շահերը, ապացույց են, որ դրանք Իմաստուն, Իր արարածների շահերին քաջատեղյակ Տիրոջից են: Եվ նրա բերած տիեզերական լուրերը, որոնց ճշմարտացիությունը վկայել է իրականությունը, ապացույց են, որ դրանք մի Տիրոջից են, Ով ի գործ է ստեղծել այն, ինչի մասին տեղեկացրել է:

4- Իսկ Ալլահի գոյության զգայական ապացույցները երկու տեսակի են՝

Նրանցից մեկը. մենք լսում և ականատես ենք լինում աղոթողներին տրվող պատասխանին և նեղյալներին ցուցաբերվող օգնությանը, ինչը միանշանակ վկայում է Նրա՝ Բարձրյալի, գոյության մասին: Բարձրյալ Ալլահն ասում է.

﴿وَنُوحًا إِذْ نَادَىٰ مِنْ قَبْلُ فَاسْتَجَبْنَا لَهُ...﴾

«Եվ Նոյին, երբ նա նախկինում օգնություն խնդրեց, և Մենք պատասխանեցինք նրան...» [Անբիյա:76] Ալլահն ասաց.

﴿إِذْ تَسْتَغِيثُونَ رَبَّكُمْ فَاسْتَجَبَ لَكُمْ...﴾

«Երբ դուք օգնություն էիք խնդրում ձեր Տիրոջից, և նա պատասխանեց ձեզ...» [Ալ-Անֆալ:9]

Եվ «Սահիհ ալ-Բուխարի»-ում Անաս իբն Մալիքը (թող Ալլահը գոհ լինի նրանից) ասաց.

«إِنَّ أَعْرَابِيًّا دَخَلَ يَوْمَ الْجُمُعَةِ -وَالنَّبِيُّ صَلَّى اللَّهُ عَلَيْهِ وَسَلَّمَ يَخْطُبُ- فَقَالَ: يَا رَسُولَ اللَّهِ، هَلْكَ الْمَالُ، وَجَاعَ الْعِيَالُ، فَأَذْغَ اللَّهُ لَنَا؛ فَرَفَعَ يَدَيْهِ وَدَعَا، فَتَارَ السَّحَابُ أَمْثَالَ الْجِبَالِ، فَلَمْ يَنْزِلْ عَنْ مَنِيرِهِ حَتَّى رَأَيْتُ الْمَطَرَ يَتَخَادَرُ عَنْ لِحْيَتِهِ».

«Ուրբաթ օրը մի արաբ քոչվոր մտավ մզկիթ, այն պահին, երբ Մարգարեն ﷺ քարոզում էր, և ասաց. «Ո՛վ Ալլահի Առաքյալ, ունեցվածքը կործանվել է, ընտանիքները սովի մեջ են. խնդրում ենք՝ աղոթիր Ալլահին մեզ համար»: Այդ ժամանակ նա բարձրացրեց իր ձեռքերը և աղոթեց: Եվ ահա ամպերը բարձրացան լեռների նման: Եվ նա չիջավ իր մինբարից, մինչև ես տեսա, թե ինչպես էր անձրևը հոսում նրա մորուքի վրայով»:¹

Հաջորդ ուրբաթ օրը այդ արաբ քոչվորը, կամ ուրիշ մեկը, կանգնեց և ասաց. «Ո՛վ Ալլահի Առաքյալ, շենքերը քանդվել են, ունեցվածքը ջրի տակ է անցել, խնդրում ենք՝ աղոթիր Ալլահին մեզ համար»: Այա նա բարձրացրեց իր ձեռքերը և ասաց ﷺ.

«اللَّهُمَّ حَوَالَيْنَا وَلَا عَلَيْنَا»

¹ Ալ-Բուխարի: Գիրք՝ Ուրբաթ, Գուլի՝ Ուրբաթօրյա քարոզի ժամանակ անձրևի աղոթք, համար (891):

«Ո՛վ Ալլահ, թող այն լինի մեր շուրջը, և ոչ թե մեր վրա»: Եվ նա որ կողմը ցույց էր տալիս, այդ կողմում ամպերը անմիջապես բացվում էին¹:

Եվ աղոթողներին պատասխանելը մինչև մեր օրերը ականատես եղած իրողություն է նրա համար, ով անկեղծորեն ապավինում է Ամենակարող Աստծուն և կատարում է պատասխան ստանալու պայմանները:

Երկրորդ փաստարկ. մարգարեների նշանները, որոնք կոչվում են հրաշքներ, և որոնց մարդիկ ականատես են լինում կամ որոնց մասին լսում են, անհերքելի ապացույց են նրանց Ուղարկողի՝ Ամենաբարձրյալ Ալլահի գոյության: Քանզի դրանք մարդկային կարողությունների սահմաններից դուրս են, և Ալլահն է դրանք իրագործում՝ ի գորակցություն Իր առաքյալների և ի հաղթանակ նրանց:

Օրինակ՝ Մուսայի (Մովսեսի) հրաշքը, երբ Ամենաբարձրյալ Ալլահը նրան հրամայեց իր գավազանով հարվածել ծովին: Նա հարվածեց, և ծովը բաժանվեց տասներկու ցամաք ճանապարհների, իսկ դրանց միջև եղած ջրերը կանգնած էին լեռների նման: Ամենաբարձրյալ Ալլահն ասաց.

¹ Հաղորդել է ալ-Բուխարին. Գիրք ուրբաթորյա աղոթքի մասին, Գուլի՝ ուրբաթորյա քարոզի ժամանակ անձրև խնդրելու մասին, համար (891), և Մուալիմը. Գիրք անձրև խնդրելու աղոթքի մասին, Գուլի՝ անձրև խնդրելու ժամանակ աղոթելու մասին, համար (897):

﴿فَأَوْحَيْنَا إِلَىٰ مُوسَىٰ أَنْ أَضْرِبْ بِعَصَاكَ الْبَحْرَ فَانْفَلَقَ فَكَانَ كُلُّ فَرَقٍ كَالطُّودِ
الْعَظِيمِ 63﴾

«Եվ Մենք հայտնեցինք Մուսային (Մովսեսին), որ իր գավազանով հարվածի ծովին: Եվ այն ճեղքվեց, և ամեն մի մասը դարձավ հսկա լեռան նման»: [Աշ-Շու'արա:63]

Եվ երկրորդ օրինակը՝ Հիսուսի (խաղաղություն նրան) հրաշքը, որտեղ նա Ալլահի թույլտվությամբ հարություն էր տալիս մեռելներին և նրանց հանում գերեզմաններից: Բարձրյալ Ալլահը նրա մասին ասում է.

﴿...وَأَحْيَا الْمَوْتَىٰ يَوْمَ الْبَازِئِ...﴾

«...և կենդանացնում եմ մեռելներին Ալլահի թույլտվությամբ...» [Ալ 'Իմրան:49]: Նա ասաց.

﴿...وَإِذْ تَخْرُجُ الْمَوْتَىٰ يَوْمَ الْبَازِئِ...﴾

«...և երբ դու մեռելներին դուրս էիր բերում Իմ թույլտվությամբ...» [Ալ-Մահիդա:110]

Եվ երրորդ օրինակը. երբ Կուրեյշ ցեղը Մուհամմադ մարգարեից ﷺ հրաշք պահանջեց, նա մատնացույց արեց լուսինը, և այն երկու մասի բաժանվեց, ինչը տեսան մարդիկ: Եվ այդ մասին Բարձրյալ Ալլահն ասում է.

﴿أَفْتَرَبْتَ آلْسَاعَةَ وَأَنْشَقَّ الْقَمَرُ 1 وَإِنْ يَرَوْا آيَةً يُعَرِّضُوا وَيَقُولُوا سِحْرٌ مُّسْتَمِرٌّ﴾

﴿2﴾

«Մոտեցավ ժամը և լուսինը բաժանվեց: Եվ եթե նրանք մի հրաշք են տեսնում, երես են թեքում և ասում. «Սա շարունակական կախարդանք է»»: [Կամար:1-2]

Այս ընկալելի նշանները, որոնք Ալլահն իրականացնում է ի գորակցություն Իր առաքյալների և ի հաղթանակ նրանց, անհերքելիորեն վկայում են Նրա գոյության մասին:

Երկրորդը, ինչը ներառում է Ալլահի հանդեպ հավատքը՝ հավատքն է Նրա Տերությանը, այսինքն՝ հավատալը, որ Նա է միակ Տերը, Ով չունի ո՛չ զուգընկեր, ո՛չ էլ օգնական:

Տերը՝ Նա, ումն է արարչությունը, տիրապետությունը և հրամանը, ուստի չկա արարիչ, բացի Ալլահից, և չկա տեր, բացի Նրանից, և չկա հրաման, բացի Նրանից: Ասել է Ամենաբարձրյալը.

﴿...أَلَا لَهُ الْخَلْقُ وَالْأَمْرُ...﴾

«...Ահա՛, Նրան է պատկանում և՛ արարչությունը, և՛ հրամանը...»: [Ալ-Ա'րաֆ:54]: Նա ասաց.

﴿...ذَلِكُمْ اللَّهُ رَبُّكُمْ لَهُ الْمُلْكُ وَالَّذِينَ تَدْعُونَ مِنْ دُونِهِ مَا يَمْلِكُونَ مِنْ قِطْمِيرٍ﴾

«Այդպիսին է Ալլահը՝ ձեր Տերը, Նրանն է իշխանությունը, իսկ նրանք, ում դուք երկրպագում եք Նրա փոխարեն, անգամ ամենաչնչին բանի չեն տիրապետում»: [Ֆատիր:13]

Հայտնի չէ, որ արարածներից որևէ մեկը ժխտել է Ալլահի՝ Փառք Նրան, Տերությունը, բացի նրանից, ով եղել է ամբարտավան՝ չհավատալով

իր ասածին, ինչպես եղավ Փարավոնի դեպքում, երբ նա ասաց իր ժողովրդին.

﴿فَقَالَ أَنَا رَبُّكُمُ الْأَعْلَى 24﴾

«Եվ ասաց. «Ես եմ ձեր ամենաբարձրյալ Տերը»»: 24 [Ան-Նազիաթ:24], Նա ասաց

﴿...يَا أَيُّهَا الْمَلَأَ مَا عَلِمْتُ لَكُمْ مِنْ إِلَهٍ غَيْرِي...﴾

«...Ո՛վ մեծամեծներ, ես ձեզ համար ինձնից բացի այլ աստված չգիտեմ...»: [Կոսու:38], սակայն դա դավանանքից չէ: Ալլահն ասաց.

﴿وَجَدُوا بِهَا وَاسْتَفْتَيْنَهَا أَنْفُسُهُمْ ظُلْمًا وَعُلُوًّا...﴾

«Եվ նրանք ուրացան դրանք, մինչդեռ իրենց հոգիները համոզված էին դրանցում, անարդարությամբ և ամբարտավանությամբ...»: [Ան-Նամլ:14] Եվ Մուսան(Մովսեսն) ասաց փարավոնին, ինչպես Ալլահը պատմել է նրա մասին.

﴿...لَقَدْ عَلِمْتَ مَا أَنْزَلَ هَؤُلَاءِ إِلَّا رَبُّ السَّمَوَاتِ وَالْأَرْضِ بِصَآئِرٍ وَإِنِّي لَأَظُنُّكَ يُفْرِعُونَ مَثْبُورًا﴾

«Դու հաստատ գիտես, որ սրանք որպես ականհայտ ապացույցներ իջեցրել է միայն երկինքների և երկրի Տերը, և ես, ո՛վ Փարավոն, իսկապես կարծում եմ, որ դու կործանված ես»: [Իսրա:102] Այդ պատճառով էլ բազմաստվածներն ընդունում էին Ալլահի Տեր լինելը, բայց միևնույն ժամանակ Նրան գործընկերներ էին վերագրում երկրպագության մեջ: Բարձրյալ Ալլահն ասաց.

﴿قُلْ لِمَنِ الْأَرْضُ وَمَنْ فِيهَا إِنْ كُنْتُمْ تَعْلَمُونَ 84 سَيَقُولُونَ لِلَّهِ قُلْ أَفَلَا تَذَكَّرُونَ 85 قُلْ مَنْ رَبُّ السَّمَوَاتِ السَّبْعِ وَرَبُّ الْعَرْشِ الْعَظِيمِ 86 سَيَقُولُونَ لِلَّهِ قُلْ أَفَلَا تَتَّقُونَ 87 قُلْ مَنْ يَبْدِئُ مَلَكُوتَ كُلِّ شَيْءٍ وَهُوَ يُجِيرُ وَلَا يُجَارُ عَلَيْهِ إِنْ كُنْتُمْ تَعْلَمُونَ 88 سَيَقُولُونَ لِلَّهِ قُلْ فَأَنَّى تُسْحَرُونَ 89﴾

«Ասա. «Ու՛մն է երկիրը և այն ամենը, ինչ նրա մեջ է, եթե դուք գիտեք»» (84):

«Նրանք կասեն. «Ալլահինն է»»:

Ասա. «Մի՞թե չեք խորհում» (85):

Ասա. «Ո՛վ է յոթ երկինքների Տերը և Մեծ գահի Տերը» (86):

«Նրանք կասեն. «Ալլահինն է»»:

Ասա. «Մի՞թե չեք երկյուղում» (87):

Ասա. «Ո՛վ է, որի ձեռքում է ամեն ինչի լիակատար իշխանությունը, Ով պաշտպանում է, իսկ Նրա դեմ ոչ ոք չի կարող պաշտպանել, եթե գիտեք» (88):

«Նրանք կասեն. «Ալլահինն է»»:

Ասա. «Այդ դեպքում ինչպե՞ս եք խաբվում» (89)»: [Ալ-Մումիհուն:84 - 89]:

Ալլահն ասաց.

﴿وَلَيْنَ سَأَلْتَهُمْ مَنْ خَلَقَ السَّمَوَاتِ وَالْأَرْضَ لَيَقُولُنَّ خَلَقَهُنَّ الْعَزِيزُ الْعَلِيمُ 9﴾

«Եվ եթե դու նրանց հարցնես. «Ո՛վ է ստեղծել երկինքներն ու երկիրը», նրանք անպայման կասեն. «Դրանք ստեղծել է Ամենակարողը, Ամենագետը»»: [Ազ-Չուխրուֆ:9]:

Եվ Փառավորն ասաց.

﴿وَلَيْنَ سَأَلْتَهُمْ مَنْ خَلَقَهُمْ لَيَقُولُنَّ اللَّهُ فَأَنَّى يُؤْفَكُونَ 87﴾

«Եվ եթե նրանց հարցնես, թե ով է նրանց ստեղծել, նրանք անպայման կասեն՝ Ալլահը: Ուրեմն ինչպես են մոլորվում ճշմարտությունից»: [Ազ-Չուխրուֆ:87]:

Եվ Ամենաբարձրյալ Ալլահի հրամանը ընդգրկում է և՛ տիեզերական, և՛ կրոնափրավական հրամանը: Ուստի, ինչպես Նա տիեզերքի կառավարիչն է, որն իր կամեցածով է վճռում՝ համաձայն իր իմաստության պահանջի, այդպես էլ Նա է դրա մեջ իշխողը՝ պաշտամունքի օրենքով և փոխհարաբերությունների կանոններով՝ համաձայն իր իմաստության պահանջի: Ով Բարձրյալ Ալլահի հետ մեկտեղ օրենսդիր է ընդունում երկրպագության մեջ, կամ դատավոր՝ գործարքներում, նա Նրան համահավասար է վերագրել և չի իրագործել հավատքը:

Երրորդը, ինչը ներառում է Ալլահի հանդեպ հավատքը, դա Նրա աստվածության հանդեպ հավատքն է: Այսինքն՝ որ Նա է միակ ճշմարիտ Աստվածը, և Նա հավասարը չունի: Եվ (Ալ-Իլահ) բառը նշանակում է (Ալ-Մա'լուհ), այսինքն՝ (Երկրպագվողը)՝ սիրով և մեծարանքով:

Ալլահն ասաց.

﴿وَالْهُكْمُ إِلَهُ وَحْدًا لَا إِلَهَ إِلَّا هُوَ الرَّحْمَنُ الرَّحِيمُ (163)﴾

«Եվ ձեր Աստվածը միակ Աստվածն է: Չկա ոչ մի աստվածություն, որն արժանի է

երկրպագության, բացի Նրանից: Նա Ողորմածն է, Գթառատը»: [Ալ-Բակարա:163] Ալլահն ասաց.

﴿شَهِدَ اللَّهُ أَنَّهُ لَا إِلَهَ إِلَّا هُوَ وَالْمَلَائِكَةُ وَأُولُوا الْعِلْمِ قَائِمًا بِالْقِسْطِ لَا إِلَهَ إِلَّا هُوَ الْعَزِيزُ الْحَكِيمُ 18﴾

«Ալլահը, հրեշտակները և գիտության տերերը վկայում են, որ չկա աստված, բացի Նրանից, և որ Նա արդարություն է հաստատում: Չկա աստված, բացի Նրանից՝ Ամենագորից, Ամենախնաստունից»: [Ալ 'Իմրան:18]՝ Եվ յուրաքանչյուր ոք, ով Ալլահից բացի մեկ այլ աստված է ընդունում, որին երկրպագում է, ապա նրա աստվածությունը անվավեր է: Եվ ասել է Ամենաբարձրյալ Ալլահը.

﴿ذَٰلِكَ بِأَنَّ اللَّهَ هُوَ الْحَقُّ وَأَنَّ مَا يَدْعُونَ مِنْ دُونِهِ هُوَ الْبَاطِلُ وَأَنَّ اللَّهَ هُوَ الْعَلِيُّ الْكَبِيرُ 62﴾

«Այդպես է, որովհետև Ալլահն է ճշմարտությունը, և այն, ինչին նրանք եկրպագում են Նրանից բացի, սուտ է, և որ Ալլահն է Բարձրյալը, Մեծագույնը»: [Հաջջ:62] Եվ նրանց աստվածներ անվանելը նրանց աստվածության իրավունք չի տալիս. Ալլահ Բարձրյալն ասաց (Ալ-Լաթի, ալ-'Ուլզալի և Մանաթի) մասին.

﴿إِنْ هِيَ إِلَّا أَسْمَاءٌ سَمَّيْتُمُوهَا أَنْتُمْ وَءَابَاؤُكُمْ مِمَّا أَنْزَلَ اللَّهُ بِهَا مِنْ سُلْطَانٍ...﴾

«Նրանք ընդամենը անուններ են, որոնք դուք և ձեր նախնիներն եք հորինել, և որոնց համար Ալլահը ոչ մի ապացույց չի իջեցրել...» [Ան-Նաջմ:23].

Եվ նա ասաց Հուդի մասին, (խաղաղություն նրան), որ նա ասաց իր ժողովրդին:

﴿...أُجِدُّوْنِي فِي أَسْمَاءَ سَمَّيْتُمُوهَا أَنْتُمْ وَأَبَاؤُكُمْ مَا نَزَّلَ اللَّهُ بِهَا مِنْ سُلْطَانٍ...﴾

«...Մի՞թե վիճում եք ինձ հետ այն անունների շուրջ, որոնք դուք և ձեր հայրերն եք հորինել, որոնց վերաբերյալ Ալլահը ոչ մի ապացույց չի իջեցրել...»: [Ալ-Ա'րաֆ:71]:

Եվ նա ասաց Յուսուֆի (Հովսեփի) մասին (խաղաղություն նրան), որ նա ասաց բանտի իր երկու ընկերներին.

﴿يُصَلِّبِي الْبَيْتَيْنِ أَرْبَابَ مُتَفَرِّقُونَ خَيْرٌ أَمِ اللَّهِ أَلَوْحِدُ الْقَهَّارُ مَا تَعْبُدُونَ مِنْ دُونِهِ إِلَّا أَسْمَاءَ سَمَّيْتُمُوهَا أَنْتُمْ وَأَبَاؤُكُمْ مَا أَنْزَلَ اللَّهُ بِهَا مِنْ سُلْطَانٍ...﴾

«Ո՛վ իմ երկու բանտակից ընկերներ, արդյո՞ք բազմաթիվ աստվածները ավելի լավ են, թե՛ Միակ, Ամենակարող Ալլահը: Դուք Նրանից բացի երկրպագում եք ընդամենը անունների, որոնք դուք և ձեր հայրերն եք հորինել, և որոնց համար Ալլահը որևէ ապացույց չի իջեցրել...»: [Յուսուֆ:39-40]

Եվ այս պատճառով առաքյալները (խաղաղություն և օրհնություն Ալլահի նրանց վրա) ասում էին իրենց ժողովուրդներին.

﴿...أَعْبُدُوا اللَّهَ مَا لَكُمْ مِنْ إِلَهٍ غَيْرُهُ...﴾

«...Երկրպագե՛ք Ալլահին, քանզի Նրանից բացի այլ աստված չունեք...»: [Ալ-Ա'րաֆ:59]
Սակայն բազմաստվածները մերժեցին դա և Ալլահից բացի աստվածներ վերցրեցին, որոնց երկրպագում են Ամենաբարձրյալ Ալլահի հետ

միասին և նրանցից խնդրում են հաղթանակ ու օգնություն հայցում:

Եվ Ալլահը՝ Փառավոր և Մեծարելի, անվավեր է դարձրել բազմաստվածների կողմից այս աստվածությունների ընդունումը՝ երկու բանական փաստարկով:

Առաջինը. այն կեղծ աստվածությունները, որոնց նրանք ընտրել են, չունեն աստվածությանը հատուկ ոչ մի առանձնահատկություն: Դրանք ստեղծված են և չեն ստեղծում, չեն կարող օգուտ բերել իրենց երկրպագողներին և չեն կարող վնաս հեռացնել նրանցից, չեն տիրապետում նրանց կյանքի կամ մահվան վրա, և չեն տիրապետում ոչ մի բանի երկինքներում, և դրանցում որևէ բաժին չունեն:

Ալլահն ասաց.

﴿وَاتَّخَذُوا مِنْ دُونِ اللَّهِ لَا يَخْلُقُونَ شَيْئًا وَهُمْ يُخْلَقُونَ وَلَا يَمْلِكُونَ أَنْ يَنْفُسَهُمْ ضَرًّا وَلَا نَفْعًا وَلَا يَمْلِكُونَ مَوْتًا وَلَا حَيَاةً وَلَا نُشُورًا﴾ 3

«Եվ նրանք Նրանից բացի այլ աստվածներ ընդունեցին, որոնք ոչինչ չեն ստեղծում, մինչդեռ իրենք ստեղծված են, և չեն տիրապետում իրենց համար ոչ վնասի, ոչ օգուտի, և չեն տիրապետում ոչ մահվան, ոչ կյանքի և ոչ հարության»:
[Ֆուրկան:3]

Ալլահն ասաց.

﴿قُلْ ادْعُوا الَّذِينَ زَعَمْتُمْ مِنْ دُونِ اللَّهِ لَا يَمْلِكُونَ مِثْقَالَ ذَرَّةٍ فِي السَّمَوَاتِ وَلَا فِي الْأَرْضِ وَمَا لَهُمْ فِيهِمَا مِنْ شِرْكٍَ وَمَا لَهُ مِنْهُمْ مَنِ ظَهِيرٌ وَلَا تَنْفَعُ الشَّفَعَةُ عِنْدَهُ إِلَّا لِمَنْ أَذِنَ لَهُ...﴾

«Ասա՛. «Կանչեցե՛ք նրանց, որոնց դուք պաշտում էիք Ալլահից բացի»: Նրանք փոշու հատիկի չափ անգամ իշխանությունն չունեն երկնքում և ոչ էլ երկրի վրա: Եվ նրանք դրանցում ոչ մի բաժին չունեն: Եվ Նա նրանցից ոչ մի օգնական չունի: Եվ Նրա մոտ բարեխոսությունը օգուտ չի տա, բացի նրանից, ում Նա թույլ կտա...»: [Սաքա:22-23]

وقال تعالى: ﴿أَيُشْرِكُونَ مَا لَا يَخْلُقُ شَيْئًا وَهُمْ يُخْلَقُونَ 191 وَلَا يَسْتَبِيعُونَ لَهُمْ نَصْرًا وَلَا أَنْفُسُهُمْ يَنْصُرُونَ 192﴾

Եվ Ամենաբարձրյալն ասաց. «Մի՞թե նրանք Նրան հավասարեցնում են նրանց, ովքեր ոչինչ չեն ստեղծում, մինչդեռ իրենք ստեղծված են: 191 Եվ ի զորու չեն նրանց օգնել, ոչ էլ իրենք իրենց են օգնում 192»: [Ալ-Մ'րաֆ:191-192]

Եվ եթե սա է այդ աստվածների վիճակը, ապա նրանց որպես աստվածներ ընդունելը մեծագույն հիմարություն է և ամենամեծ սուտը:

Երկրորդը՝ այս բազմաստվածները խոստովանում էին, որ Ամենաբարձրյալ Ալլահն է միակ Տերն ու Արարիչը, Ում ձեռքում է ամեն ինչի իշխանությունը, և Նա է, Ով պաշտպանում է, և ոչ ոք չի կարող պաշտպանել Նրանից: Սա պարտադրում է, որ նրանք Նրան միակ ճանաչեն աստվածայնության մեջ, ինչպես որ Նրան միակ էին ճանաչել տերության մեջ: Ալլահն ասաց.

﴿يَا أَيُّهَا النَّاسُ اعْبُدُوا رَبَّكُمُ الَّذِي خَلَقَكُمْ وَالَّذِينَ مِنْ قَبْلِكُمْ لَعَلَّكُمْ تَتَّقُونَ 21 الَّذِي جَعَلَ لَكُمُ الْأَرْضَ فِرَاشًا وَالسَّمَاءَ بِنَاءً وَأَنْزَلَ مِنَ السَّمَاءِ مَاءً فَأَخْرَجَ بِهِ مِنَ الثَّمَرَاتِ رِزْقًا لَكُمْ فَلَا تَجْعَلُوا لِلَّهِ أَنْدَادًا وَأَنْتُمْ تَعْلَمُونَ 22﴾

«Մարդիկ, երկրպագեցե՛ք ձեր Տիրոջը՝ Նրան, Ով ձեզ ստեղծեց, ինչպես նաև նրանց, ովքեր եղել են ձեզնից առաջ, որպեսզի դուք բարեպաշտ լինեք ու խուսափեք մեղքերից: Նա է, Ով ձեզ համար երկիրը դարձրել է հարթ մակերես՝ որպես անկողին, երկինքը՝ որպես շինվածք, և երկնքից ջուր է իջեցրել, որով դուրս է բերել պտուղներ՝ որպես ապրուստ ձեզ համար: Ուրեմն մի՛ դասեք Ալլահին համահավասարներ, մինչդեռ դուք գիտեք (որ չկա Նրան հավասար ոչ ոք)»: [Բակարա:21-22]

Ալլահն ասաց.

﴿وَلَيْن سَأَلْتَهُمْ مَنْ خَلَقَهُمْ لَيَقُولُنَّ اللَّهُ فَأَنَّى يُؤْفَكُونَ 87﴾

«Եվ եթե նրանց հարցնես, թե ով է նրանց ստեղծել, նրանք անպայման կասեն՝ Ալլահը: Ուրեմն ի՞նչպես են մոլորվում ճշմարտությունից»: [Ազ-Զուխրուֆ:87]:

Ալլահն ասաց.

﴿قُلْ مَنْ يَرْزُقُكُمْ مِنَ السَّمَاءِ وَالْأَرْضِ أَمَّنْ يَمْلِكُ السَّمْعَ وَالْأَبْصَارَ وَمَنْ يُخْرِجُ الْحَيَّ مِنَ الْمَيِّتِ وَيُخْرِجُ الْمَيِّتَ مِنَ الْحَيِّ وَمَنْ يُدَبِّرُ الْأُمْرَ قَسِيْفَوْنَ 31 فَذَلِكُمْ اللَّهُ رَبُّكُمْ الْحَقُّ فَمَاذَا بَعْدَ الْحَقِّ إِلَّا الضَّلَالُ فَأَنَّى تُصْرَفُونَ 32﴾

«Ասա. «Ո՛վ է ձեզ ապրուստ տալիս երկնքից ու երկրից, կամ ո՛վ է տիրապետում լսողությանն ու տեսողությանը: Ո՛վ է կենդանին հանում մեռածից և մեռածը՝ կենդանուց, և ո՛վ է

կառավարում ամեն ինչ»: Նրանք կասեն՝ «Ալլահը»: Ապա ասա. «Մի՞թե չեք դառնա աստվածավախ»: Ահա այդպիսին է Ալլահը՝ ձեր ճշմարիտ Տերը: Ապա ի՞նչ կա ճշմարտությունից հետո, բացի մոլորությունից: Ուրեմն ի՞նչպես եք շեղվում ճշմարտությունից»: [Յունուս:31-32]:

Չորրորդ կետը, որը ներառում է Ալլահի հանդեպ հավատքը՝ հավատալ Նրա Անուններին և Հատկանիշներին:

Այսինքն՝ հաստատել այն Անուններն ու Հատկանիշները, որոնք Ալլահը հաստատել է Իր համար Իր Գրքում կամ Իր Առաքյալի ﷺ Սուննայում, այնպես, ինչպես վայել է Նրան՝ առանց խեղաթյուրելու, մերժելու, կերպավորելու կամ նմանեցնելու: Ասել է Բարձրյալ Ալլահը.

﴿وَلِلَّهِ الْأَسْمَاءُ الْحُسْنَىٰ فَادْعُوهُ بِهَا وَذُرُّوا الَّذِينَ يُلْحِدُونَ فِي أَسْمَائِهِ سَيُجْزَوْنَ مَا كَانُوا يَعْمَلُونَ﴾ (180)

«Ամենագեղեցիկ անունները Ալլահինն են, դիմե՛ք Նրան դրանցով և հեռո՛ւ մնացե՛ք նրանցից, ովքեր աղավաղում են Նրա անունները: Նրանք կհատուցվեն իրենց արածի համար»: [Ալ-Ա'րաֆ:180] Ալլահն ասաց.

﴿...وَلَهُ الْمَثَلُ الْأَعْلَىٰ فِي السَّمَوَاتِ وَالْأَرْضِ وَهُوَ الْعَزِيزُ الْحَكِيمُ﴾

«...և Նրան է պատկանում Բարձրագույն Նկարագիրը երկինքներում և երկրում: Եվ Նա է Ամենագորը, Իմաստունը»: [Առ-Ռում:27] Ալլահն ասաց.

(...أَلَيْسَ كَمِثْلِهِ شَيْءٌ وَهُوَ السَّمِيعُ الْبَصِيرُ)

«Նրան նման ոչինչ չկա, և Նա է Լսողը և Տեսնողը»: [Շուրա:11]

Այս հարցում մոլորվել են երկու խմբավորում.

Դրանցից մեկը՝ (ալ-Մու'ատտիլա) նրանք են, ովքեր ժխտեցին անուններն ու հատկանիշները կամ դրանց մի մասը՝ պնդելով, որ դրանք Ալլահին վերագրելը ենթադրում է նմանեցում, այսինքն՝ Ամենակարող Աստծուն իր ստեղծածներին նմանեցնելը: Այս պնդումը սխալ է մի քանի պատճառներով, որոնցից են.

Առաջինը՝ որ այն ենթադրում է սուտ հետևանքներ, ինչպիսին է հակասությունը Փառապանծ Ալլահի խոսքում, և դա այն պատճառով, որ Ամենաբարձրյալ Ալլահն Իր համար հաստատեց անուններն ու հատկանիշները և ժխտեց, որ Իր նման որևէ բան կա: Իսկ եթե դրանց հաստատումը ենթադրեր նմանեցում, ապա Ալլահի խոսքում հակասություն կլիներ, և դրա մի մասը կհերքեր մյուսին:

Երկրորդը. երկու բաների՝ անվան կամ որևէ հատկանիշի մեջ համընկնելը չի նշանակում, որ դրանք նույնական են, այսպես, դուք տեսնում եք երկու մարդկանց, որոնք ընդհանրություն ունեն նրանում, որ նրանցից յուրաքանչյուրը մարդ է՝ լսող, տեսնող, խոսող, Եվ դա չի նշանակում, որ

դրանք նման են մարդկային իմաստներով՝ լսողությամբ, տեսողությամբ և խոսքով:

Դու տեսնում ես, որ կենդանիներն ունեն ձեռքեր, ոտքեր և աչքեր, սակայն այս ընդհանրությունից չի հետևում, որ նրանց ձեռքերը, ոտքերը և աչքերը նույնանման լինեն:

Եթե տարբերություն է ի հայտ գալիս արարածների միջև՝ իրենց ընդհանուր անուններում կամ հատկանիշներում, ապա Արարչի և արարածի միջև եղած տարբերությունն առավել ակնհայտ է և առավել մեծ:

Երկրորդ խումբը՝ (Մուշաբբիհաներ): Նրանք հաստատեցին Անուններն ու Հատկանիշները՝ միաժամանակ Բարձրյալ Ալլահին նմանեցնելով Իր արարածներին՝ պնդելով, որ սա է տեքստերի իմաստը, քանի որ Բարձրյալ Ալլահը դիմում է Իր ծառաներին այնպես, ինչպես նրանք հասկանում են: Սակայն այս պնդումը անհիմն է մի քանի պատճառներով, որոնցից են.

Առաջինը՝ այն է, որ Բարձրյալ Ալլահի նմանությունն իր ստեղծածներին մի բան է, որը ժխտում են և՛ բանականությունը, և՛ շարիաթը, և անհնար է, որ Գրքի (Կուռանի) և Սուննայի տեքստերի բովանդակությունը անվավեր լինի:

Երկրորդը՝ այն է, որ Բարձրյալ Ալլահը դիմել է ծառաներին այնպես, ինչպես նրանք հասկանում են՝ ըստ իմաստի հիմնական ընկալման: Իսկ ինչ վերաբերում է այդ իմաստի իրական էությանը,

ապա դա այն գիտելիքներից է, որը Բարձրյալ Ալլահը վերապահել է միայն Իրեն՝ կապված Իր Էության և Բնութագրերի հետ:

Ուստի, եթե Ալլահը հաստատել է Իր համար, որ Նա Լսող է, ապա լսողությունն իր հիմնական իմաստով հայտնի է (որը ձայների ընկալումն է), սակայն դրա Էությունն Ալլահի լսողության նկատմամբ անհայտ է, քանի որ լսողության Էությունը տարբերվում է նույնիսկ արարածների մոտ, ուստի Արարչի և արարածի միջև եղած տարբերությունն առավել ակնհայտ է և ավելի մեծ:

Եվ երբ Բարձրյալ Ալլահը հայտնում է Իր մասին, որ Նա բարձրացել է Իր Գահի վրա, ապա Իստիվան (բարձրանալը) իր հիմնական իմաստով հայտնի է, սակայն Իստիվայի իրական Էությունը, թե ինչպիսին է այն Ալլահի՝ Իր Գահի վրա բարձրանալու դեպքում, մեզ համար անհայտ է, քանի որ Իստիվայի իրական Էությունը տարբեր է արարածի դեպքում: Ուրեմն, կայուն աթոռի վրա հաստատվելը նման չէ անհնազանդ ու խրտնող ուղտի թամբի վրա հաստատվելուն: Եվ եթե դրանք տարբեր են արարածի պարագայում, ապա Արարչի և արարածի միջև եղած տարբերությունն ավելի ակնհայտ է և ավելի մեծ:

Իսկ հավատքն Ալլահի հանդեպ, ինչպես նկարագրվեց, հավատացյալների համար բերում է ազնիվ պտուղներ, որոնցից են՝

Առաջինը՝ Բարձրյալ Ալլահի միաստվածության իրականացումը, այնպես, որ ո՛չ հույս, ո՛չ էլ երկյուղ չուղղվի ուրիշին՝ բացի Նրանից, և չերկրպագվի ոչ ոք՝ բացի Նրանից:

Երկրորդ՝ Բարձրյալ Ալլահին սիրելու և մեծարելու կատարելությունը՝ համաձայն Նրա լավագույն անունների և վեհագույն բնութագրերի:

Երրորդը՝ Նրա երկրպագության իրականացումը՝ կատարելով այն, ինչ Նա հրամայել է, և խուսափելով այն ամենից, ինչ Նա արգելել է:

*

Հավատք Հրեշտակներին

Հրեշտակները անտեսանելի աշխարհ են, արարածներ, որոնք երկրպագում են Ամենակարող Աստծուն, և նրանց բնորոշ չէ Տիրականության և Աստվածայնության որևէ հատկանիշ: Բարձրյալ Ալլահը նրանց ստեղծել է լույսից՝ շնորհելով լիակատար հնազանդություն Իր հրամանին և գործություն՝ այն իրագործելու համար: Բարձրյալ Ալլահն ասել է.

﴿...وَمَنْ عِنْدَهُ لَا يَسْتَكْبِرُونَ عَنْ عِبَادَتِهِ وَلَا يَسْتَحْسِرُونَ يُسَبِّحُونَ اللَّيْلَ وَالنَّهَارَ لَا يَفْتُرُونَ﴾

«Իսկ նրանք, ովքեր Նրա մոտ են, ամենևին էլ չեն ամբարտավանում Նրան երկրպագելուց և չեն հոգնում : Նրանք գիշեր ու զօր փառաբանում են Նրան առանց դադարի»: [Անբիյա:19-20]

Նրանք մեծաթիվ են և նրանց թիվը հայտնի է միայն Ամենաբարձրյալ Ալլահին: Երկու «Մահիի» ժողովածուներում հաստատված է Անասի (թող Ալլահը գոհ լինի նրանից) հաղորդած հաղիսում՝ Միրաժի պատմության մասին, որ Մարգարեին  երկնքում ցույց տրվեց ալ-Բեյթ ալ-Մա'ամուրը, որտեղ ամեն օր յոթանասուն հազար հրեշտակ է աղոթում: Այնտեղից դուրս գալուց հետո նրանք այլևս երբեք չեն վերադառնում:

Իսկ հավատքը հրեշտակներին ներառում է չորս հիմնական սկզբունք՝

Առաջինը՝ հավատք նրանց գոյությանը:

Երկրորդ՝ անհատական հավատք նրանց, ում անունները գիտենք (ինչպես Ջիբրիլը), և ընդհանրական հավատք նրանց, ում անունները չգիտենք:

Երրորդ՝ հավատքը նրանց՝ մեզ հայտնի հատկանիշներին, ինչպես օրինակ՝ Ջիբրիլի (Գաբրիելի) նկարագրությունը: Քանզի Մարգարեն  հայտնել է, որ տեսել է նրան իր այն կերպարանքով, որով ստեղծվել է, և նա ունեցել է վեց հարյուր թև, որոնք փակել են հորիզոնը:

Եվ երբեմն հրեշտակը, Բարձրյալ Ալլահի հրամանով, վերածվում է տղամարդու կերպարանքի, Այդպես պատահեց Ջիբրիլի հետ, երբ Բարձրյալ Ալլահը նրան ուղարկեց Մարիամի մոտ, և նա նրան ներկայացավ կատարյալ մարդու կերպարանքով: Նաև երբ նա եկավ Մարգարեի  մոտ, մինչ նա նստած էր իր

ուղեկիցների հետ, նա եկավ ձյունաճերմակ հագուստով և ածխի պես սև մազերով մի մարդու տեսքով, որի վրա ճանապարհորդության ոչ մի հետք չէր երևում, և նրա ուղեկիցներից ոչ ոք նրան չէր ճանաչում: Նա նստեց Մարգարեի ﷺ դիմաց, իր ծնկները հպեց նրա ծնկներին և իր ափերը դրեց իր ազդրերին: Նա հարցրեց Մարգարեին ﷺ Իսլամի, Իմանի (հավատքի), Իհսանի (անթերի երկրպագության), Ժամի (Ահեղ Դատաստանի) և դրա նախանշանների մասին: Մարգարեն ﷺ պատասխանեց նրան, որից հետո այցելուն հեռացավ: Այնուհետև Մարգարեն ﷺ ասաց.

«هَذَا جَبْرِيلُ؛ أَتَاكُمْ يُعَلِّمُكُمْ دِينَكُمْ».

«Սա Ջիբրիլն է. նա եկել է ձեզ սովորեցնելու ձեր կրոնը»:

Նույնպես և այն հրեշտակները, որոնց Ալլահն ուղարկել էր Իբրահիմի և Լուտի մոտ, տղամարդկանց կերպարանքով էին:

Չորրորդը, ինչը ներառում է հավատքը հրեշտակներին՝ հավատքն է նրանց կողմից Ալլահի հրամանով կատարվող այն գործերին, որոնց մասին մենք գիտենք, ինչպես օրինակ՝ Նրան փառաբանելը և երկրպագելը գիշեր ու ցերեկ՝ առանց ձանձրության և հոգնածության:

¹ Հադիթը գտնվում է Մուսլիմը՝ «Հավատք» գիրք, «Հավատքի, իսլամի և իհսանի բացատրությունը և Ամենաբարձր լի Ալլահի նախասահմանության հաստատմանը հավատալու պարտադիր լինելը» բաժին, թիվ (8):

Եվ նրանցից ոմանք կարող են ունենալ հատուկ գործեր:

Օրինակ՝ Ջիբրիլը, որին Բարձրյալ Ալլահը վստահել է Իր հայտնությունը և դրանով ուղարկում է նրան մարգարեների և առաքյալների մոտ:

Օրինակ՝ Միքայիլը, որին հանձնարարված է անձրևը և բուսականությունը:

Եվ օրինակ՝ Իսրաֆիլը, որին հանձնարարված է Փողը փչել Դատաստանի ժամի հաստատման և արարածների հարության համար:

Օրինակ՝ Մահվան հրեշտակը, որին հանձնարարված է մահվան պահին հոգիներն առնելը:

Օրինակ՝ Մալիկը, որը պատասխանատու է դժոխքի համար, և նա դժոխքի պահապանն է:

Օրինակ՝ արգանդներում սաղմերի համար նշանակված հրեշտակները: Երբ մարդն իր մոր որովայնում չորս ամիսը լրացնում է, Ալլահը նրա մոտ մի հրեշտակ է ուղարկում և հրամայում նրան գրել նրա ապրուստը, կյանքի տևողությունը, գործերը, և թե դժբախտ է լինելու, թե՛ երջանիկ:

Օրինակ՝ այն հրեշտակները, որոնք հանձնարարված են պահպանելու և գրի առնելու Ադամի որդիների գործերը. յուրաքանչյուր մարդ ունի երկու հրեշտակ՝ մեկը աջից, իսկ մյուսը՝ ձախից:

Օրինակ՝ այն հրեշտակները, որոնց հանձնարարված է հարցաքննել մահացածին, երբ նրան դնում են իր գերեզմանում: Նրա մոտ են գալիս երկու հրեշտակ և հարցնում նրան իր Տիրոջ, կրոնի և մարգարեի մասին:

Եվ հրեշտակներին հավատալը մեծ պտուղներ է տալիս, որոնցից են՝

Առաջինը՝ գիտությունն է Ամենակարող Ալլահի մեծության, Նրա զորության և իշխանության մասին, քանզի արարածի մեծությունը վկայում է Արարչի մեծության մասին:

Երկրորդը՝ Ալլահ Բարձրյալին երախտագիտություն հայտնելը՝ Ադամի որդիների հանդեպ Իր հոգատարության համար, քանի որ Նա այդ հրեշտակներից ոմանց հանձնարարել է զբաղվել նրանց պաշտպանությամբ, գործերի գրառմամբ և նրանց բարօրությանն առնչվող այլ հարցերով:

Երրորդը՝ սեր հրեշտակների հանդեպ՝ Ամենաբարձրյալ Ալլահին իրենց մատուցած երկրպագության համար:

Մուրյալներից մի խումբ ժխտել է, որ հրեշտակները մարմիններ են, և ասել են. «Նրանք արարածների մեջ թաքնված բարի ուժերի արտահայտությունն են»: Եվ սա Ամենակարող Աստծո գրքի, Նրա առաքյալի (խաղաղություն և օրհնություն նրան) սուննայի և մուսուլմանների միահամուռ կարծիքի ժխտումն է:

Ալլահին ասաց.

﴿الْحَمْدُ لِلَّهِ فَاطِرِ السَّمَوَاتِ وَالْأَرْضِ جَاعِلِ الْمَلَكَةِ رُسُلًا أُولِي أَجْنَحَةٍ مِّنْهُنَّ وَثَلَاثٌ وَرُبُعٌ...﴾

«Փառք Ալլահին՝ երկինքների ու երկրի Արարչին, Ով հրեշտակներին դարձրեց պատգամաբերներ՝ երկուական, երեքական և չորսական թևերով...» [Փատիր:1]

Ալլահին ասաց.

﴿وَلَوْ تَرَىٰ إِذْ يَتَوَفَّى الَّذِينَ كَفَرُوا الْمَلَائِكَةُ يَضْرِبُونَ وُجُوهَهُمْ وَأَدْبِرُ هُمْ...﴾

«Եվ եթե տեսնեիր, թե ինչպես են հրեշտակները հոգիներն առնում անհավատների՝ հարվածելով նրանց դեմքերին և թիկունքներին...» [Ալ-Անֆալ:50]

Ալլահին ասաց.

﴿...وَلَوْ تَرَىٰ إِذِ الظَّالِمُونَ فِي غَمَرَاتِ الْمَوْتِ وَالْمَلَائِكَةُ بَاسِطُوا أَيْدِيهِمْ أَخْرَجُوا أَنفُسَهُمْ...﴾

«...Եվ եթե տեսնեիր, թե ինչպես են անիրավները մահվան տառապանքների մեջ, և հրեշտակները մեկնել են իրենց ձեռքերը (ասելով). «Հանե՛ք ձեր հոգիները»...» [Ալ-Ան'ամ:93]

Ալլահին ասաց.

﴿...حَتَّىٰ إِذَا فُزِّعَ عَنْ قُلُوبِهِمْ قَالُوا مَاذَا قَالَ رَبُّكُمْ قَالُوا الْحَقُّ وَهُوَ الْعَلِيُّ الْكَبِيرُ﴾

«Երբ նրանց սրտերից վախը կվերանա, նրանք կասեն. «Ի՞նչ ասաց ձեր Տերը»: Նրանք կասեն. «Ճշմարտությունը, և Նա է Բարձրյալը, Մեծը»»: [Սաքա:23]

Նա ասաց Դրախտի բնակիչների մասին.

﴿...وَالْمَلَائِكَةُ يَدْخُلُونَ عَلَيْهِمْ مِنْ كُلِّ بَابٍ سَلَامٌ عَلَيْكُمْ بِمَا صَبَرْتُمْ فَنِعَمَ عُقْبَى الَّذِينَ﴾

«...և իրեշտակաները նրանց մոտ են մտնում ամեն դարպասից: Խաղաղություն ձեզ ձեր համբերության համար: Որքա՛ն հիանալի է վերջնական հանգրվանը»: [Ռա'դ:23-24]

Եվ Սահիի ալ-Բուխարիում Աբու Հուրեյրայից (թող Ալլահը գոհ լինի նրանից) հաղորդվում է, որ Մարգարեն ﷺ ասաց.

«إِذَا أَحَبَّ اللَّهُ الْعَبْدَ نَادَىٰ جَبْرِيْلَ: إِنَّ اللَّهَ يُحِبُّ فُلَانًا فَأَحْبِبْهُ، فَيُحِبُّهُ جَبْرِيْلُ، فَيَنَادِي جَبْرِيْلُ فِي أَهْلِ السَّمَاءِ: إِنَّ اللَّهَ يُحِبُّ فُلَانًا فَأَحْبِبُوهُ، فَيُحِبُّهُ أَهْلُ السَّمَاءِ، ثُمَّ يُوَضَّعُ لَهُ الْقَبُولُ فِي الْأَرْضِ».

«Երբ Ալլահը սիրում է մի ծառայի, Նա կանչում է Ջիբրիլին. «Անշուշտ, Ալլահը սիրում է այսինչին, ուստի սիրի՛ր նրան», և Ջիբրիլը սիրում է նրան: Այա Ջիբրիլը կանչում է երկնքի բնակիչներին. «Անշուշտ, Ալլահը սիրում է այսինչին, ուստի սիրեցե՛ք նրան», և երկնքի բնակիչները սիրում են նրան, ապա նրա համար ընդունելություն է հաստատվում երկրի վրա»:

Եվ դրանում նաև Աբու Հուրեյրայից (թող Ալլահը գոհ լինի նրանից) հաղորդվում է, որ Մարգարեն ﷺ ասաց.

«إِذَا كَانَ يَوْمُ الْجُمُعَةِ كَانَ عَلَىٰ كُلِّ بَابٍ مِنْ أَبْوَابِ الْمَسْجِدِ الْمَلَائِكَةُ يَكْتُتُونَ الْأَوَّلَ فَأَلَّأُولَ، فَإِذَا جَلَسَ الْإِمَامُ طَوَّأُوا الصُّحُفَ وَجَاءُوا يَسْتَمِعُونَ الذِّكْرَ».

¹ Հաղորդել են ալ-Բուխարին՝ «Արարչության սկիզբը» գիրք, «Հրեշտակաների հիշատակումը» գլուխ, թիվ (3037), և Մուալիմը՝ «Բարեպաշտության, բարեկամական կապերի և բարեկրթության» գիրք, «Եթե Ալլահը սիրի մի ծառայի, Նա նրան սիրելի կդարձնի Իր ծառաներին» գլուխ, թիվ (2637):

«Ուրբաթ օրը մզկիթի յուրաքանչյուր դռան մոտ կանգնում են հրեշտակներ, որոնք գրում են եկողներին՝ մեկը մյուսի հետևից: Երբ իմամը նստում է, նրանք ծալում են մատյանները և գալիս են լսելու հիշատակումը (քարոզը)»¹:

Այս տեքստերը հստակորեն փաստում են, որ հրեշտակները մարմիններ են, այլ ոչ թե միայն ոչ նյութական ուժեր, ինչպես պնդում են մոլորյալները: Եվ այս տեքստերի համաձայն՝ մուսուլմանները միահամուռ կարծիքի են եկել:

*

Հավատք Սուրբ Գրքերի նկատմամբ

Գրքեր. գիրք բառի հոգնակին է՝ գրված իմաստով:

Այսինքն՝ դրանք այն Սուրբ Գրքերն են, որոնք Ալլահ Բարձրյալը իջեցրել է Իր առաքյալներին՝ ի ողորմություն և առաջնորդություն Իր արարածներին, որպեսզի նրանք դրանց միջոցով հասնեն իրենց երջանկությանը թե՛ այս աշխարհում, թե՛ հավիտենական կյանքում:

Իսկ հավատքը Սուրբ Գրքերի նկատմամբ ներառում է չորս հարց՝

Առաջինը՝ հավատքը, որ դրանց իջեցումը Ալլահի կողմից ճշմարտություն է:

¹ Հաղորդել են ալ-Բուխարին՝ «Ուրբաթ» գիրք, «Քարոզը լսելու» գլուխ, թիվ (887), և Մուայիմը՝ «Ուրբաթ» գիրք, «Ուրբաթ օրը վաղ գնալու առավելության» գլուխ, թիվ (850):

Երկրորդ՝ առանձնահատուկ հավատք այն գրքերին, որոնց անունները մենք գիտենք, ինչպես Կուռանը, որը իջեցվել է Մուհամմադին ۞ և Թաուրաթը (Տորան), որը իջեցվել է Մուսային(Մովսեսին) ۞ և Ինջիլը (Ավետարանը), որն Ալլահը հայտնեց Հիսուսին ۞ և Չաբուրը, որը տրվեց Դաուդին (Դավթին) ۞, իսկ ինչ վերաբերում է նրանց, որոնց անունները մենք չգիտենք, հավատում ենք ընդհանրապես:

Երրորդ՝ հավատալ դրանց ճշմարիտ պատմություններին, ինչպես Կուռանի պատմությունները և նախկին գրքերից այն, ինչը չի փոփոխվել կամ աղավաղվել:

Չորրորդը՝ գործելը ըստ այն կանոնների, որոնք չեն չեղարկվել, և դրանք ընդունելն ու հնազանդվելը՝ անկախ նրանից՝ հասկանում ենք դրանց իմաստությունը, թե ոչ: Բոլոր նախորդ գրքերը չեղարկված են Փառահեղ Կուռանով: Ալլահն ասաց.

(وَأَنزَلْنَا إِلَيْكَ الْكِتَابَ بِالْحَقِّ مُصَدِّقًا لِّمَا بَيْنَ يَدَيْهِ مِنَ الْكِتَابِ وَمُهَيْمِنًا عَلَيْهِ...)

«Եվ Մենք իջեցրել ենք Քեզ վրա Գիրքը ճշմարտությամբ՝ որպես հաստատում իրենից առաջ եղած Սուրբ Գրքերի, և որպես պահապան դրանց վրա...» [Ալ-Մաիդա:48] այսինքն Դատող նրա վրա:

Հետևաբար, անթույլատրելի է գործել նախորդ գրքերի որևէ դրույթով, բացի նրանից, ինչը հավաստի է և հաստատված է Կուռանով:

Եվ հավատքը Գրքերի նկատմամբ վեհ պտուղներ է տալիս, որոնցից են՝

Առաջինը՝ Ալլահի հոգատարության իմացությունն է Իր ծառաների նկատմամբ, քանզի Նա յուրաքանչյուր ազգի համար ուղարկել է մի Սուրբ Գիրք և որով առաջնորդել է նրանց:

Երկրորդը՝ իմանալ Ամենաբարձրյալ Ալլահի իմաստությունն Իր շարիաթում, քանզի Նա յուրաքանչյուր ազգի համար սահմանել է այն, ինչը համապատասխանում է նրանց վիճակներին: Ինչպես Ալլահն ասաց.

(...لِكُلٍّ جَعَلْنَا مِنْكُمْ شِرْعَةً وَمَنْهَاجًا...)

«...Մենք Ձեզանից յուրաքանչյուրի համար սահմանել ենք օրենք և հստակ ուղի...» [Ալ-Մաիդա:48]

Երրորդը՝ երախտագիտություն հայտնելը Ալլահի օրհնության համար :

*

Հավատք Մագարեներին

Առաքյալներ. «առաքյալ» բառի հոգնակին է, որը նշանակում է «ուղարկված», այսինքն՝ որևէ բան հաղորդելու համար առաքված:

Այստեղ իմաստը հետևյալն է՝ մարդկանցից այն մեկը, ում աստվածային օրենք է իջեցվել և հրամայվել է այն փոխանցել:

Եվ առաքյալներից առաջինը Նուհն է (Նոյն է), խաղաղություն նրան, իսկ նրանցից վերջինը՝

Մուհամմադը, թող Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա:

Ալլահն ասաց.

﴿إِنَّا أَوْحَيْنَا إِلَيْكَ كَمَا أَوْحَيْنَا إِلَى نُوحٍ وَالنَّبِيِّينَ مِنْ بَعْدِهِ...﴾

«Մենք Քեզ հայտնեցինք, ինչպես հայտնեցինք Նոյին և նրանից հետո եկած Մարգարեներին...» [Ան-Նիսա:163]:

Եվ Սահիհ ալ-Բուխարիում Անաս իբն Մալիքից (թող Ալլահը գոհ լինի նրանից) Բարեխոսության մասին հաղիսում հաղորդվում է, որ Մարգարեն ﷺ ասաց.

«ذَكَرَ أَنَّ النَّاسَ يَأْتُونَ إِلَى آدَمَ؛ لِيَشْفَعَ لَهُمْ؛ فَيَعْتَذِرُ إِلَيْهِمْ وَيَقُولُ: ائْتُوا نُوحًا أَوَّلَ رَسُولٍ بَعَثَهُ اللَّهُ» وذكر تمام الحديث.

«Հաղորդվում է, որ մարդիկ կգան Ադամի մոտ, որպեսզի նա բարեխոսի իրենց համար: Նա ներողություն կխնդրի նրանցից և կասի. «Գնացե՛ք Նոյի մոտ՝ առաջին առաքյալի, ում Ալլահն ուղարկեց»»: Եվ հիշատակված է հաղիսն ամբողջությամբ¹:

Եվ Ալլահն ասաց Մուհամմադի ﷺ մասին.

﴿مَا كَانَ مُحَمَّدٌ أَبَا أَحَدٍ مِنْ رِجَالِكُمْ وَلَكِنْ رَسُولَ اللَّهِ وَخَاتَمَ النَّبِيِّينَ...﴾

«Մուհամմադը ձեր տղամարդկանցից ոչ մեկի հայրը չէր, այլ նա Ալլահի առաքյալն է և վերջին

¹ Հաղորդել է ալ-Բուխարին. «Միաստվածության գիրք», Ամենաբարձրյալ Ալլահի խոսքի. «Նրան, ում ստեղծեցի Իմ երկու ձեռքով» գլուխ, համար (7410), և Մուսլիմը. «Հավատքի գիրք», «Դրախտի բնակիչներից ամենացածր աստիճան ունեցողի մասին» գլուխ, համար (193):

մարգարեն, ով կնքեց մարգարեության դուռը...»: [Ալ-Ահգաբ]

Եվ որևէ համայնք զուրկ չի մնացել Առաքյալից, որին Ամենաբարձրյալ Ալլահն ուղարկում էր իր ազգի մոտ՝ ինքնություն շարիաթով, կամ Մարգարեից, ում հայտնվում էր իրենից առաջ եղածի շարիաթը՝ այն նորացնելու համար: Ամենաբարձրյալ Ալլահն ասել է.

(وَلَقَدْ بَعَثْنَا فِي كُلِّ أُمَّةٍ رَسُولًا أَنِ اعْبُدُوا اللَّهَ وَاجْتَنِبُوا الطُّغُوتَ...)

Եվ ուղարկեցինք յուրաքանչյուր համայնքի մեջ առաքյալ, որն ասում էր. «Երկրպագեցե՛ք միայն Ալլահին և հեռու մնացե՛ք թաղութից (սուտ աստվածություններից, կուռքերից, մոլորությունից)...»: [Ան-Նահիլ:36]

Ալլահն ասաց.

(...إِن مِّنْ أُمَّةٍ إِلَّا خَلَا فِيهَا نَذِيرٌ)

«...Եվ չկա մի համայնք, որի մեջ զգուշացնող չանցած լինի»: [Փատիր:24]

Ալլահն ասաց.

(إِنَّا أَنْزَلْنَا التَّوْرَةَ فِيهَا هُدًى وَنُورٌ يَحْكُمُ بِهَا النَّبِيُّونَ الَّذِينَ أَسْلَمُوا لِلَّذِينَ هَادُوا...)

«Անշուշտ, Մենք իջեցրինք Թորան, որի մեջ կա առաջնորդություն և լույս: Դրանով էին դատում Ալլահին հնազանդված Մարգարեները հրեաների համար...» [Ալ-Մաիդա:44]

Առաքյալները ստեղծված մարդիկ են, նրանք աստվածային հատկություններից ոչինչ չունեն: Ամենաբարձրյալ Ալլահն ասել է Իր մարգարե Մուհամմադի մասին, ով առաքյալների

առաջնորդն է և նրանցից ամենապատվավորը Ալլահի մոտ.

﴿قُلْ لَا أَمْلِكُ لِنَفْسِي نَفْعًا وَلَا ضَرًّا إِلَّا مَا شَاءَ اللَّهُ وَلَوْ كُنْتُ أَعْلَمُ الْغَيْبِ
لَا سَتَكُنْتُ مِنَ الْخَيْرِ وَمَا مَسْنِيَ السُّوءُ إِنْ أَنَا إِلَّا نَذِيرٌ وَبَشِيرٌ لِّقَوْمٍ يُؤْمِنُونَ
﴾188

«Ասա՛. «Ես իշխանություն չունեմ ինքս ինձ համար որևէ օգուտ կամ վնաս բերելու, բացի նրանից, ինչ կամենում է Ալլահը: Եթե ես իմանայի անտեսանելին, ապա կշատացնեի բարիքը, և ինձ ոչ մի չարիք չէր դիպչի: Ես ընդամենը զգուշացնող եմ և բարի ավետիս բերող՝ այն ժողովրդի համար, ովքեր հավատում են»»: [Ալ-Ա'րաֆ:188] :

Ալլահն ասաց.

﴿قُلْ إِنِّي لَا أَمْلِكُ لَكُمْ ضَرًّا وَلَا رَشَدًا 21 قُلْ إِنِّي لَنْ يُجِيرَنِي مِنَ اللَّهِ أَحَدٌ وَلَنْ
أُجِدَ مِنْ دُونِهِ مُلْتَحَدًا 22﴾

«Ասա՛. «Ես ձեզ համար ո՛չ վնասի, ո՛չ էլ ուղղության իշխանություն չեմ տիրապետում: Իսկապես, ինձ ոչ ոք երբեք չի պաշտպանի Ալլահից, և Նրանից բացի այլ ապաստան երբեք չեմ գտնի»»: [Ալ-Ջինն:21-22]

Եվ նրանց բնորոշ են մարդկային հատկանիշները՝ հիվանդություն, մահ, սննդի և ընպելիքի կարիք և այլն: Ամենակարող Ալլահն ասաց Աբրահամի (խաղաղություն եւ օրհնություն նրան) մասին, իր Ամենակարող Տիրոջը նկարագրելիս.

﴿وَالَّذِي هُوَ يُطْعَمُنِي وَيَسْقِينِ 79 وَإِذَا مَرَضْتُ فَهُوَ يَشفِينِ 80 وَالَّذِي يُمِيتُنِي ثُمَّ يُحْيِينِ 81﴾

«Եվ Նա է, Ով ինձ կերակրում է ու խմեցնում: Եվ երբ հիվանդանում եմ, Նա է, Ով ինձ բուժում է: Եվ Նա է, Ով ինձ մահ է տալու, ապա կենդանացնելու»: [Աշ-Շուարա:79-81]:

Եվ Մարգարեն ﷺ ասաց.

«إِنَّمَا أَنَا بَشَرٌ مِّثْلُكُمْ، أَنَسَى كَمَا تَنْسَوْنَ، فَإِذَا نَسِيتُ فَذَكِّرُونِي».

«Ես ընդամենը ձեզ նման մարդ եմ, մոռանում եմ, ինչպես դուք եք մոռանում, ուստի եթե մոռանամ, հիշեցրե՛ք ինձ»:

Եվ Ալլահը նկարագրել է նրանց Իրեն ծառայությամբ՝ նրանց ամենաբարձր դիրքերում և նրանց գովասանքի համատեքստում: Եվ Ալլահն ասաց Նոյի՝ Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա, մասին.

﴿...إِنَّهُ كَانَ عَبْدًا شَكُورًا﴾

«...անշուշտ, նա երախտապարտ ծառա էր»:
[Իսրա:3], Եվ ասաց Մուհամմադի մասին.

﴿تَبَارَكَ الَّذِي نَزَّلَ الْفُرْقَانَ عَلَى عَبْدِهِ لِيَكُونَ لِلْعَالَمِينَ نَذِيرًا 1﴾

«Օրհնյալ է Նա, Ով իջեցրեց Ֆուրկանը Իր ծառայի վրա, որպեսզի նա աշխարհների համար զգուշացնող լինի»:
[Ֆուրկան:1]

¹ Հադորդել են ալ-Բուխարին՝ «Կիբլայի գլուխներ», «Դեպի Կիբլան ուղղվելը, որտեղ էլ որ լինի» գլուխ, թիվ (392), և Մուալիմը՝ «Մզկիթների և աղոթատեղիների մասին» գիրք, «Աղոթքի մեջ մոռացկոտության և դրա համար խոնարհվելու մասին» գլուխ, թիվ (572):

Եվ ասաց Աբրահամի, Իսահակի և Հակոբի մասին (Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը նրանց վրա)։

﴿وَأَذْكُرْ عَبْدَنَا إِبْرَاهِيمَ وَإِسْحَاقَ وَيَعْقُوبَ أُولَى الْأَيْدِي وَالْأَبْصَارِ 45 إِنَّا أَخْلَصْنَاهُمْ بِخَالِصَةٍ ذِكْرَى الدَّارِ 46 وَإِنَّهُمْ عِنْدَنَا لَمِنَ الْمُصْطَفَيْنِ الْأَخْيَارِ 47﴾

«Եվ հիշի՛ր մեր ծառաներին՝ Աբրահամին, Իսահակին և Հակոբին՝ ուժի և խորաթափանցության տերերին: 45 Իրոք, Մենք նրանց առանձնացրինք մի մաքուր հատկությամբ՝ Հանդերձյալ կյանքի հիշատակով: 46 Եվ իրոք, նրանք Մեզ մոտ ընտրյալներից ու լավագույններից են: 47» [Սող:45-47]

Եվ Ալլահն ասաց Հիսուսի՝ Մարիամի որդու մասին.

﴿إِنَّ هُوَ إِلَّا عَبْدٌ أَنْعَمْنَا عَلَيْهِ وَجَعَلْنَاهُ مَثَلًا لِّبَنِي إِسْرَءِيلَ 59﴾

«Նա ընդամենը մի ծառա է, ում Մենք շնորհ ընծայեցինք և Իսրայելի որդիների համար օրինակ դարձրինք»: [Ազ-Չուխրուֆ:59]:

Իսկ հավատքը Առաքյալներին ներառում է չորս հարց՝

Առաջինը՝ հավատքն այն բանին, որ նրանց առաքելությունը ճշմարտություն է Ամենաբարձրյալ Ալլահի կողմից: Ուստի, ով ուրանում է նրանցից մեկի առաքելությունը, նա ուրացել է բոլորին: Ինչպես Ալլահն ասաց.

﴿كَذَّبَتْ قَوْمُ نُوحٍ الْمُرْسَلِينَ 105﴾

«Նոյի ժողովուրդը հերքեց առաքյալներին»:
 [ԱԶ-Շուարա:105] Ուստի Ալլահը նրանց համարեց բոլոր առաքյալներին ուրացողներ, չնայած որ նրան ուրանալու պահին նրանից բացի այլ առաքյալ չկար: Եվ այսպես, այն քրիստոնյաները, ովքեր հերքեցին Մուհամմադին ﷺ և չհետևեցին նրան, հերքում են նաև Մեսիային՝ Մարիամի որդուն, և նրան նույնպես չեն հետևում: Հատկապես որ նա ավետել է նրանց Մուհամմադի ﷺ մասին, և այդ ավետիսը այլ իմաստ չունի, քան այն, որ նա առաքյալ է՝ ուղարկված նրանց, որպեսզի Ալլահը նրա միջոցով փրկի նրանց մոլորությունից և առաջնորդի դեպի ուղիղ ճանապարհ:

Երկրորդը՝ հավատքը նրանց, ում անունները մեզ հայտնի են՝ ըստ իրենց անունների, ինչպես՝ Մուհամմադը, Աբրահամը, Մովսեսը, Հիսուսը և Նոյը (խաղաղություն նրանց): Այս հինգը վճռականության տեր առաքյալներն են, և Բարձրյալ Ալլահը հիշատակել է նրանց Կուռանի երկու տեղում՝ Իր խոսքում.

﴿وَإِذْ أَخَذْنَا مِنَ النَّبِيِّينَ مِيثَاقَهُمْ وَمِنْكَ وَنُوحٌ وَإِبْرَاهِيمُ وَمُوسَى وَعِيسَى ابْنُ مَرْيَمَ وَأَخَذْنَا مِنْهُمْ مِيثَاقًا غَلِيظًا 7﴾

«Եւ երբ մենք մարգարեներից վերցրինք նրանց ուխտը, եւ քեզանից, եւ Նոյից, եւ Աբրահամից, եւ Մովսեսից, եւ Հիսուսից՝ Մարիամի որդուց: Եւ մենք նրանցից մի ամուր ուխտ վերցրինք»:
 [Ալ-Ահգաբ:7] Եվ նա ասաց.

﴿شَرَعَ لَكُمْ مِنَ الدِّينِ مَا وَصَّى بِهِ نُوحًا وَالَّذِي أَوْحَيْنَا إِلَيْكَ وَمَا وَصَّيْنَا بِهِ إِبْرَاهِيمَ وَمُوسَى وَعِيسَى أَنْ أَقِيمُوا الدِّينَ وَلَا تَتَفَرَّقُوا فِيهِ كَبُرَ عَلَى الْمُشْرِكِينَ مَا تَدْعُوهُمْ إِلَيْهِ اللَّهُ يَجْتَبِي إِلَيْهِ مَنْ يَشَاءُ وَيَهْدِي إِلَيْهِ مَنْ يُنِيبُ ۝13﴾

«Նա ձեզ համար կրոնից օրինական դարձրեց այն, ինչը պատվիրել էր Նոյին, և այն, ինչը հայտնեցինք քեզ, և այն, ինչը պատվիրեցինք Աբրահամին, Մովսեսին և Հիսուսին, որպեսզի կրոնը պահպանեք և դրանում չպառակտվեք: Բազմաստվածների համար ծանր է այն, ինչին դու նրանց կոչ ես անում: Ալլահն Իր մոտ է ընտրում նրան, ում կամենում է, և Իր մոտ է ուղղորդում նրան, ով զղջում է»: [Շուրա:13]

Իսկ նրանց, ում անունները մենք չգիտենք, մենք հավատում ենք ընդհանրապես: Ալլահն ասաց.

﴿وَلَقَدْ أَرْسَلْنَا رُسُلًا مِّن قَبْلِكَ مِنْهُمْ مَّن قَصَصْنَا عَلَيْكَ وَمِنْهُمْ مَّن لَّمْ نَقْصُصْ عَلَيْكَ...﴾

«Եվ իսկապես մենք քեզնից առաջ առաքյալներ ենք ուղարկել, որոնցից ոմանց մասին պատմել ենք քեզ, իսկ ոմանց մասին չենք պատմել քեզ...»: [Ղոֆիր:78]

Երրորդը՝ ճշմարիտ համարել նրանց հավաստի հաղորդածները:

Չորրորդ՝ գործելը նրանցից մեզ ուղարկվածի շարիաթով, և նա նրանցից վերջինն է՝ Մուհամմադը ﷺ, ով ուղարկվել է ողջ մարդկությանը, ինչպես ասում է Ալլահը՝ Մեծն ու Փառավորը.

﴿فَلَا وَرَبِّكَ لَا يُؤْمِنُونَ حَتَّىٰ يُحَكِّمُوكَ فِيمَا شَجَرَ بَيْنَهُمْ ثُمَّ لَا يَجِدُوا فِي أَنفُسِهِمْ
حَرَجًا مِّمَّا قَضَيْتَ وَيُسَلِّمُوا تَسْلِيمًا 65﴾

«Ո՛հ, երդվում եմ քո Տիրոջով, նրանք հավատացյալ չեն լինի, մինչև քեզ դատավոր չդարձնեն իրենց միջև ծագած վեճերում, ապա իրենց հոգիներում որևէ դժկամություն չգտնեն քո կայացրած վճռից և լիակատար հնազանդությամբ չենթարկվեն»: [Ան-Նիսա:65]:

Մարգարեններին հավատքն ունի փառահեղ պտուղներ, որոնցից են՝

Առաջինը՝ Աստծո ողորմածության և Իր ծառաների նկատմամբ ունեցած հոգատարության իմացությունն է, քանզի Նա նրանց ուղարկել է առաքյալների, որպեսզի նրանց առաջնորդեն դեպի Աստծո ճանապարհը և պարգաբանեն, թե ինչպես երկրպագել Նրան, քանի որ մարդկային բանականությունն ինքնուրույն ի վիճակի չէ իմանալ դա:

Երկրորդը՝ Ալլահին երախտագիտություն հայտնելը այս մեծագույն օրհնության համար:

Երրորդը՝ Առաքյալների (Ալլահի խաղաղությունը և օրհնությունը նրանց) հանդեպ սերը, նրանց մեծարումը և գովաբանումը այն ամենով, ինչը վայել է նրանց, քանի որ նրանք Ալլահի առաքյալներն են, և քանի որ նրանք կատարել են Նրա երկրպագությունը, փոխանցել են Նրա ուղերձը և խրատել են Նրա ծառաներին:

Եվ համառոտերը հերքեցին իրենց առաքյալներին՝ պնդելով, որ Ամենակարող Ալլահի առաքյալները չեն կարող մարդկանցից լինել: Եվ Ամենակարող Աստված հիշատակեց այս պնդումը և այն անվավեր ճանաչեց Իր խոսքով, փա՛ռք Նրան.

﴿وَمَا مَنَعَ النَّاسَ أَنْ يُؤْمِنُوا إِذْ جَاءَهُمُ الْهُدَىٰ إِلَّا أَنْ قَالُوا أَبَعَثَ اللَّهُ بَشَرًا رَسُولًا 94 قُلْ لَوْ كَانَ فِي الْأَرْضِ مَلَائِكَةٌ يَمْسُورُونَ مَطْمَئِنِّينَ لَنَزَّلْنَا عَلَيْهِمْ مِنَ السَّمَاءِ مَلَكًا رَسُولًا 95﴾

«Եվ ի՞նչն արգելեց մարդկանց հավատալ, երբ նրանց ճիշտ ուղղի եկավ, բացի նրանից, որ նրանք ասացին. «Մի՞թե Ալլահը մարդուն որպես առաքյալ է ուղարկել»: 94 Ասա՛. «Եթե երկրի վրա հրեշտակներ լինեին, որոնք խաղաղ քայլեին, մենք նրանց վրա երկնքից հրեշտակ կիջեցնեինք որպես առաքյալ»»: 95 [Իսրա:94-95]

Ամենակարող Ալլահը հերքեց այս պնդումը. Առաքյալը պետք է մարդ լինի, քանի որ նա ուղարկված է երկրի բնակիչների մոտ, իսկ նրանք մարդիկ են: Եվ եթե երկրի բնակիչները հրեշտակներ լինեին, Ալլահը նրանց վրա երկնքից կիջեցներ մի հրեշտակ-առաքյալ, որպեսզի նա լիներ նրանց նման: Եվ այսպես Ալլահը պատմեց Առաքյալներին հերքողների մասին, որ նրանք ասացին.

﴿...إِنْ أَنْتُمْ إِلَّا بَشَرٌ مِّثْلُنَا تُرِيدُونَ أَنْ تَصُدُّونَا عَمَّا كَانَ يَعْبُدُ آبَاؤُنَا فَأَقِمْ وَجْهَكَ لِلدِّينِ الْقَدِيمِ الَّذِي هُوَ لَدُنَّا بِإِذْنِ اللَّهِ...﴾

«...Դուք մեզ նման սովորական մարդիկ եք, ուզում եք մեզ հետ պահել նրանից, ինչին երկրպագում էին մեր հայրերը, ուրեմն մեզ բերեք մի հստակ ապացույց»: Նրանց առաքյալներն ասացին նրանց. «Մենք էլ ձեզ նման սովորական մարդիկ ենք, բայց Ալլահը շնորհ է տալիս ում կամենա Իր ծառաներից, և մենք չենք կարող ձեզ ապացույց բերել, բացի Ալլահի թույլտվությունից...»: [Իբրահիմ:10-11]

*

Վերջին Օրվա հավատքը

Վերջին Օրը՝ Հարության Օրն է, որի ժամանակ մարդիկ հարություն կառնեն դատաստանի և հատուցման համար:

Եվ այն այդպես է կոչվել, քանի որ դրանից հետո այլ օր չկա, երբ Դրախտի բնակիչները կհաստատվեն իրենց կացարաններում, իսկ Դժոխքի բնակիչները՝ իրենց կացարաններում:

Իսկ հավատքը Վերջին Օրին ներառում է երեք հիմնական սկզբունք՝

Առաջին՝ հավատք հարությանը: Դա մեռելների վերակենդանացումն է, երբ փողը երկրորդ անգամ կհնչի, և մարդիկ կկանգնեն աշխարհների Տիրոջ առաջ՝ ոտաբոքիկ, մերկ և անթլփատ: Ամենակարող Աստված ասաց.

﴿...كَمَا بَدَأْنَا أَوَّلَ خَلْقٍ ثَعِيدَةً وَعَدَّا عَلَيْهَا إِنَّا كُنَّا فَاعِلِينَ﴾

«...Ինչպես որ սկսեցինք առաջին ստեղծումը, այնպես էլ կվերականգնենք այն: Խոստում է դա

Մեզանից: Իրապես, Մենք դա կկատարենք»: [Անբիյա:104]

Իսկ հարությունը՝ հաստատուն ճշմարտություն է, որը հաստատված է Սուրբ Գրքով, Սուննայով և մուսուլմանների համաձայնությամբ:

Ալլահն ասաց.

﴿ثُمَّ إِنَّكُمْ بَعْدَ ذَلِكَ لَمَيِّتُونَ 15 ثُمَّ إِنَّكُمْ يَوْمَ الْقِيَمَةِ تُبْعَثُونَ 16﴾

«Ապա դուք դրանից հետո մահանալու եք (15): Ապա դուք Դատաստանի օրը հարություն եք առնելու (16)»: [Ալ-Մումինուն:15-16]

Եվ Մարգարեն՝ Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա վրա, ասաց.

«يُحْشَرُ النَّاسُ يَوْمَ الْقِيَامَةِ خُفَاءَ عَزَاءٍ غُرْلًا».

«Հարության Օրը մարդիկ կհավաքվեն բոբիկ, մերկ, անթլփատ»¹: Համաձայնեցված է:

Մուսուլմանները միաձայն են դրա հաստատման հարցում, և դա բխում է իմաստությունից, որը պահանջում է, որ Ալլահ Բարձրյալը այս ստեղծվածների համար սահմանի վերադարձի մի օր՝ նրանց հատուցելու համար ըստ այն ամենի, ինչ սահմանել է նրանց համար Իր Առաքյալների միջոցով: Ալլահ Բարձրյալն ասել է.

¹ Բերված է Մուսլիմի կողմից՝ «Դրախտի գիրքը, և նրա բարիքների ու բնակիչների նկարագրությունը» գրքում, «Աշխարհի վախճանը և Դատաստանի օրվա հարության բացատրությունը» գլխում, համար (2859):

﴿أَفَحَسِبْتُمْ أَنَّمَا خَلَقْنَاكُمْ عَبَثًا وَأَنَّكُمْ إِلَيْنَا لَا تُرْجَعُونَ 115﴾

«Միթե՞ կարծում էիք, որ Մենք ձեզ ստեղծել ենք աննպատակ, և որ դուք դեպի Մեզ չեք վերադարձվելու»: [Ալ-Մումիհնուն:115] Եվ ասաց իր Մարգարեին ﷺ.

﴿إِنَّ الَّذِي فَرَضَ عَلَيْكَ الْقُرْآنَ لَرَأْيكَ إِلَىٰ مَعَادٍ...﴾

«Անշուշտ, Նա, Ով քեզ համար սահմանեց Կուռանը, քեզ վերադարձնելու է վերադարձի վայր...»: [Ալ-Կասաս:85]:

Երկրորդ՝ հավատքը հաշվետվությանն ու հատուցմանը: Ծառան հաշվետու է լինելու իր արարքների համար և հատուցվելու է դրանց դիմաց: Դրա մասին վկայում են Սուրբ Գիրքը, Սուննան և մուսուլմանների միահամուտ կարծիքը:

Ալլահն ասաց.

﴿إِنَّ إِلَيْنَا إِيَابَهُمْ 25 ثُمَّ إِنَّ عَلَيْنَا حِسَابَهُمْ 26﴾

«Անշուշտ, դեպի Մեզ է նրանց վերադարձը 25, ապա, անշուշտ, Մեզ վրա է նրանց հաշիվը 26»: [Ալ-Ղաշիյա:25-26] Ալլահն ասաց.

﴿مَنْ جَاءَ بِالْحَسَنَةِ فَلَهُ عَشْرُ أَمْثَالِهَا ۖ وَمَنْ جَاءَ بِالسَّيِّئَةِ فَلَا يُجْزَىٰ إِلَّا مِثْلُهَا ۖ وَهُمْ لَا يُظْلَمُونَ 160﴾

«Ով բարիքով է գալիս, նրան՝ դրա տասնապատիկը, իսկ ով չարիքով է գալիս, կհատուցվի միայն դրա չափով, և նրանց հանդեպ անարդարություն չի գործվի»: [Ալ-Ան'ամ:160] Ալլահն ասաց.

﴿وَنَضَعُ الْمَوَزِينَ الْقَوِیَّةَ لِلْيَوْمِ الْآخِرَةِ فَلَا تَظْلِمُ نَفْسٌ شَيْئًا وَإِنْ كَانَ مِثْقَالُ حَبَّةٍ مِّنْ خَرْدَلٍ أَتَيْنَا بِهَا وَكَفَىٰ بِنَا حَٰسِبِينَ﴾ (47)

«Դատաստանի Օրվա համար Մենք կդնենք արդարության կշեռքները, և ոչ մի հոգի ամենևին անարդարության չի ենթարկվի: Եվ եթե նույնիսկ մանանեխի հատիկի չափով մի բան լինի, Մենք այն կբերենք: Եվ բավական է, որ Մենք ենք հաշիվ տեսնողները»: [Անբիյա:47]

Իբն Ումարից (թող Ալլահը գոհ լինի նրանց երկուսից) հաղորդվում է, որ Մարգարեն (Ալլահի օրհնությունն ու խաղաղությունը լինի նրա և նրա ընտանիքի վրա) ասաց.

«إِنَّ اللَّهَ يُدْنِي الْمُؤْمِنَ، فَيَضَعُ عَلَيْهِ كَنَفَهُ - أَي سِتْرَهُ - وَيَسْتَرْهُ: فَيَقُولُ: أَتَعْرِفُ ذَنْبَ كَذَا؟ أَتَعْرِفُ ذَنْبَ كَذَا؟ فَيَقُولُ: نَعَمْ أَي رَبِّ، حَتَّى إِذَا قَرَّرَهُ بِذُنُوبِهِ، وَرَأَى فِي نَفْسِهِ أَنَّهُ هَلَكَ قَالَ: سَتَرْتُهَا عَلَيْكَ فِي الدُّنْيَا وَأَنَا أَغْفِرُهَا لَكَ الْيَوْمَ، فَيُعْطَى كِتَابَ حَسَنَاتِهِ، وَأَمَّا الْكَفَّارُ وَالْمُنَافِقُونَ فَيُنَادَى بِهِمْ عَلَى رُؤُوسِ الْأَخْلَاقِ: هَؤُلَاءِ الَّذِينَ كَذَبُوا عَلَى رَبِّهِمْ، أَلَا لَعْنَةُ اللَّهِ عَلَى الظَّالِمِينَ»

«Ալլահը մոտեցնում է հավատացյալին, նրան Իր հովանու տակ է առնում (այսինքն՝ ծածկում է նրա մեղքերը) և հարցնում. «Ճանաչո՞ւմ ես այսինչ մեղքը, ճանաչո՞ւմ ես այնինչ մեղքը»: Նա պատասխանում է. «Այո՛, ո՛վ Տեր իմ»: Երբ նա խոստովանում է իր բոլոր մեղքերը և իրեն կորած է համարում, Ալլահն ասում է. «Ես դրանք ծածկեցի քեզ համար աշխարհիկ կյանքում և այսօր ներում եմ դրանք քեզ»: Ապա նրան է տրվում իր բարի գործերի գիրքը: Իսկ ինչ վերաբերում է անհավատներին ու կեղծավորներին, ապա բոլոր արարածների

առաջ կհայտարարվի. «Սրանք են, որ սուտ խոսեցին իրենց Տիրոջ մասին: Թող Ալլահի անեծքը լինի անիրավների վրա»:¹»
Համաձայնեցված է:

Եվ հավաստի է Մարգարեից ﷺ.

«أَنَّ مَنْ هَمَّ بِحَسَنَةٍ فَعَمَلَهَا؛ كَتَبَهَا اللَّهُ عِنْدَهُ عَشْرَ حَسَنَاتٍ إِلَى سَبْعِ مِائَةٍ ضِعْفٍ إِلَى أَضْعَافٍ كَثِيرَةٍ، وَأَنْ مَنْ هَمَّ بِسَيِّئَةٍ فَعَمَلَهَا؛ كَتَبَهَا اللَّهُ سَيِّئَةً وَاحِدَةً».

«Ով մտադրվի բարի գործ անել և կատարի այն, Ալլահը նրա համար կարձանագրի տասը բարի գործ՝ հասցնելով մինչև յոթ հարյուրապատիկի և անգամ ավելի, իսկ ով մտադրվի վատ գործ անել և կատարի այն, Ալլահը կարձանագրի ընդամենը մեկ վատ գործ»²:

Մուսուլմանները միակարծիք են գործերի համար հաշվետվության և հատուցման հաստատման հարցում, և դա բխում է իմաստությունից: Քանզի Ալլահը՝ Ամենաբարձրյալը, իջեցրել է Սուրբ Գրքերը և ուղարկել է Առաքյալներին, և Իր ծառաներին պարտավորեցրել է ընդունել այն, ինչով նրանք եկել են, և գործել ըստ այն ամենի, ինչը պարտադիր է դրանում, և պարտադիր է դարձրել

¹ Հադորդել են ալ-Բուխարին՝ «Անիրավությունների գիրք», Ամենաբարձրյալ Ալլահի խոսքը՝ «Արդարև, Ալլահի անեծքը լինի անիրավների վրա» գլուխ, թիվ (2309), և Մուսլիմը՝ «Ապաշխարության գիրք», «Մարդասպանի ապաշխարության ընդունումը, նույնիսկ եթե նրա սպանությունները շատ են» գլուխ, թիվ (2768):

² Հադորդել է Մուսլիմը. «Հավատի գիրք», գլուխ՝ «Եթե ծառան մտադրի բարի գործ անել, այն գրվում է, իսկ եթե մտադրի վատ գործ անել, այն չի գրվում», համար (131):

պայքարել դրան հակառակվողների դեմ, և թույլատրելի է դարձրել նրանց արյունը, սերունդներին, կանանց և ունեցվածքը: Եթե հաշիվ ու հատուցում չլինեին, ապա դա կհամարվեր զուր և անիմաստ բան, ինչից վեր է Իմաստուն Տերը: Եվ Ալլահը Բարձրյալը ցույց է տվել դա Իր խոսքերով:

﴿فَلَنَسْتَأْذِينَ الَّذِينَ أَرْسَلْنَا إِلَيْهِمُ الرِّسَالِينَ ۖ فَلَنَقُصَّنَّ عَلَيْهِم بِعِلْمٍ وَمَا كُنَّا غَائِبِينَ﴾ 7

«Անշուշտ, Մենք հարցաքննելու ենք նրանց, ում առաքյալներ են ուղարկվել, և անշուշտ, հարցաքննելու ենք նաև Առաքյալներին: Այնուհետև Մենք անպայման կպատմենք նրանց ամեն ինչ՝ լիակատար գիտությամբ, քանզի Մենք բացակա չենք եղել»: [Ալ-Ա'րաֆ:6-7]:

Երրորդը՝ հավատալը Դրախտին ու Դժոխքին, և որ դրանք արարածների հավերժական հանգրվանն են:

Դրախտը երանության տունն է, որը Ամենակարող Ալլահը պատրաստել է բարեպաշտ հավատացյալների համար, ովքեր հավատացին այն ամենին, ինչին Աստված պարտավորեցրեց նրանց հավատալ, և հնազանդվեցին Աստծուն ու Նրա առաքյալին՝ անկեղծ լինելով Աստծո առաջ և հետևելով Նրա առաքյալին: Այնտեղ կան ամեն տեսակի երանություններ:

﴿مَا لَا عَيْنٌ رَأَتْ، وَلَا أُذُنٌ سَمِعَتْ، وَلَا خَطَرَ عَلَى قَلْبِ بَشَرٍ﴾

﴿وَأَنفُوا النَّارَ الَّتِي أُعِدَّتْ لِلْكَافِرِينَ 131﴾

«Եվ զգուշացե՛ք այն կրակից, որը նախապատրաստվել է անհավատների համար»: [Ալի 'Իմրան:131] Ալլահն ասաց.

﴿وَقُلِ الْحَقُّ مِنْ رَبِّكُمْ فَمَنْ شَاءَ فَلْيُؤْمِنْ وَمَنْ شَاءَ فَلْيُكْفُرْ إِنَّا أَعْتَدْنَا لِلظَّالِمِينَ نَارًا أَحَاطَ بِهِمْ سُرَادِقُهَا وَإِنْ يَسْتَغِيثُوا يُغَاثُوا بِمَاءٍ كَالْمُهْلِ يَشْوِي الْوُجُوهَ بِئْسَ الشَّرَابُ وَسَاءَتْ مُرْتَفَقًا 29﴾

«Եվ ասա. «Ճշմարտությունը ձեր Տիրոջից է: Ուստի, ով կամենա, թող հավատա, և ով կամենա, թող անհավատ դառնա»: Մենք անիրավների համար պատրաստել ենք մի կրակ, որի վրանը կշրջապատի նրանց: Եվ եթե նրանք օգնություն խնդրեն, նրանց կտրվի հալած մետաղի նման մի ջուր, որը կխանձի դեմքերը: Ի՛նչ սոսկալի ընպելիք և ի՛նչ սոսկալի հանգրվան»: [Բահֆ:29] Ալլահն ասաց.

﴿إِنَّ اللَّهَ لَعَنَ الْكَافِرِينَ وَأَعَدَّ لَهُمْ سَعِيرًا 64 خَالِدِينَ فِيهَا أَبَدًا لَا يَجْدُونَ وَلِيًّا وَلَا نَصِيرًا 65 يَوْمَ ثَقُصَتْ وُجُوهُهُمْ فِي النَّارِ يَقُولُونَ يَلَيِّنَا أَطْعَنَا اللَّهُ وَأَطْعَنَا أَلَسْنَا لَا 66﴾

«Անշուշտ, Ալլահը անիծել է անհավատներին և նրանց համար բորբոքված կրակ է պատրաստել (64): Նրանք հավիտյան կմնան այնտեղ և չեն գտնի ոչ մի հովանավոր, ոչ էլ օգնական (65): Այն օրը, երբ նրանց դեմքերը կշրջվեն կրակի մեջ, նրանք կասեն. «Երանի՛ մենք հնազանդվեինք Ալլահին և հնազանդվեինք Առաքյալին»» (66): [Ալ-Ահգար:64-66]

Վերջին Օրվա հավատքի վեհ պտուղներից են՝

Առաջինը՝ հնազանդության գործեր կատարելու ցանկությունը և դրա հանդեպ ջանասիրությունը՝ ակնկալելով այդ Օրվա վարձատրությունը:

Երկրորդ՝ երկյուղ մեղք գործելուց և դրանով գոհ լինելուց՝ այդ օրվա պատժից վախենալով:

Երրորդը՝ հավատացյալի մխիթարությունն է աշխարհիկ կորուստների դիմաց՝ հանդերձյալ կյանքի երանության և դրա վարձատրության հույսով:

Անհավատները ժխտել են մահից հետո Հարությունը՝ պնդելով, որ դա անհնար է:

Այս պնդումը կեղծ է, ինչի մասին վկայում են Չարիաթը(կրոնական օրենքը), զգայարանները և բանականությունը:

Իսկ ինչ վերաբերում է Շարիաթին, ապա Ալլահն ասաց.

﴿زَعَمَ الَّذِينَ كَفَرُوا أَنْ لَنْ يُبْعَثَ قُلْ بَلَىٰ وَرَبِّي لَتُبْعَثُنَّ ثُمَّ لَتُنَبَّؤُنَّ بِمَا عَمِلْتُمْ وَذَٰلِكَ عَلَى اللَّهِ يَسِيرٌ 7﴾

«Անհավատները պնդեցին, թե իրենք երբեք հարություն չեն առնելու: Ասա՛. «Այո՛, երդվում եմ իմ Տիրոջով, դուք անպայման հարություն եք առնելու, ապա ձեզ կտեղեկացվի այն մասին, ինչ գործել եք: Եվ դա Ալլահի համար հեշտ է»»:
[Թադաբուն:7] Եվ բոլոր երկնային գրքերը համամիտ են այդ հարցում:

Իսկ ինչ վերաբերում է շոշափելի ապացույցին, ապա Ալլահն Իր ծառաներին ցույց է տվել

մեռելների հարությունը այս աշխարհում, և Ալ-Բակարա սուրայում կան դրա հինգ օրինակներ, որոնք են՝

Առաջին օրինակը. Մովսեսի ժողովուրդը, երբ նրան ասացին.

﴿...أَنْ تُؤْمِنَ لَكَ حَتَّىٰ نَرَىٰ اللَّهَ جَهْرَةً...﴾

«...Մենք քեզ չենք հավատա, մինչև որ Ալլահին բացահայտ չտեսնենք...»: [Բակարա:55] Ալլահը, Բարձրյալ է Նա, մահացրեց նրանց, ապա կենդանացրեց նրանց, Եվ դրա մասին Ալլահն ասաց՝ դիմելով Իսրայելի որդիներին.

﴿وَإِذْ قُلْنَا لِمُوسَىٰ أَنْ تُؤْمِنَ لَكَ حَتَّىٰ نَرَىٰ اللَّهَ جَهْرَةً فَأَخَذَتْكُمُ الصَّعْقَةُ وَأَنْتُمْ تُنظَرُونَ 55 ثُمَّ بَعَثْنَاكَ مِنْ بَعْدِ مَوْتِكَ لَعَلَّكُمْ تَشْكُرُونَ 56﴾

«Եվ հիշեցե՛ք, երբ ասացիք. «Ո՛վ Մովսես, մենք երբեք չենք հավատա քեզ, մինչև որ Ալլահին բացահայտ չտեսնենք»։ Եվ կայծակը հարվածեց ձեզ, մինչ դուք նայում էիք: 55 Ապա մենք ձեզ հարություն տվեցինք ձեր մահից հետո, որպեսզի դուք երախտապարտ լինեք»: 56 [Ալ-Բակարա:55-56]

Երկրորդ օրինակ. սպանվածի պատմության մեջ, որի շուրջ վիճում էին Իսրայելի որդիները, Ամենաբարձրյալ Ալլահը նրանց հրամայեց մի կով մորթել և դրա մի մասով հարվածել նրան, որպեսզի նա հայտնեք, թե ով է իրեն սպանել: Եվ այդ մասին Ամենաբարձրյալ Ալլահն ասում է.

﴿وَإِذْ قَتَلْتُمْ نَفْسًا فَادْرَأْتُمْ فِيهَا وَاللَّهُ مُخْرِجٌ مَّا كُنْتُمْ تَكْتُمُونَ 72 فَقُلْنَا اضْرِبُوهُ بِبَعْضِهَا كَذَلِكَ يُحْيِي اللَّهُ الْمَوْتَىٰ وَيُرِيكُمْ آيَاتِهِ لَعَلَّكُمْ تَعْقِلُونَ 73﴾

«Եվ երբ դուք մի մարդու սպանեցիք, ապա սկսեցիք վիճել այդ մասին, իսկ Ալլահը հայտնեց այն, ինչ դուք թաքցնում էիք: (72) Ապա Մենք ասացինք. «Հարվածե՛ք նրան (մարմնին) դրա (կովի) մի մասով»: Այդպես է Ալլահը կենդանացնում մեռյալներին և ցույց տալիս ձեզ Իր նշանները, որպեսզի դուք խորհեք»: (73) [Ալ-Բակարա:72-73]

Երրորդ օրինակը. այն ժողովրդի պատմության մեջ, որոնք հազարներով դուրս եկան իրենց տներից՝ մահից փախչելով, Ամենաբարձրյալ Ալլահը նրանց մահ տվեց, ապա կենդանացրեց: Եվ այդ մասին Ամենաբարձրյալ Ալլահն ասում է.

﴿أَلَمْ تَرَ إِلَى الَّذِينَ خَرَجُوا مِنْ دِيَارِهِمْ وَهُمْ أُلُوفٌ حَذَرَ الْمَوْتِ فَقَالَ لَهُمُ اللَّهُ مُوتُوا ثُمَّ أَحْيَاهُمْ إِنَّ اللَّهَ لَذُو فَضْلٍ عَلَى النَّاسِ وَلَكِنَّ أَكْثَرَ النَّاسِ لَا يَشْكُرُونَ﴾ (243)

«Մի՞ թե չես տեսել նրանց, ովքեր հազարներով դուրս եկան իրենց տներից՝ մահվան վախից: Եվ Ալլահն ասաց նրանց. «Մեռե՛ք»: Ապա Նա կենդանացրեց նրանց: Իրապես, Ալլահը շնորհալի է մարդկանց հանդեպ, սակայն մարդկանց մեծամասնությունը երախտապարտ չէ: 243» [Ալ-Բակարա:243]

Չորրորդ օրինակը. այն մարդու պատմության մեջ, ով անցավ մի մեռած գյուղով և անհավանական համարեց, թե Ամենաբարձրյալ Ալլահը կկենդանացնի այն, Ամենաբարձրյալ Ալլահը նրան հարյուր տարով մահվան մատնեց,

ապա կենդանացրեց: Այդ մասին
Ամենաբարձրյալ Ալլահն ասում է.

﴿أَوَكَلَّيْ مَرَّ عَلَى قَرْيَةٍ وَهِيَ خَاوِيَةٌ عَلَى عُرُوشِهَا قَالَ أَنَّى يُحْيِي هَذِهِ اللَّهُ بَعْدَ
مَوْتِهَا فَأَمَاتَهُ اللَّهُ مِائَةَ عَامٍ ثُمَّ بَعَثَهُ قَالَ كَمْ لَبِثْتَ قَالَ لَبِثْتُ يَوْمًا أَوْ بَعْضَ يَوْمٍ قَالَ
بَلْ لَبِثْتُ مِائَةَ عَامٍ فَانْظُرْ إِلَى طَعَامِكَ وَشَرَابِكَ لَمْ يَتَسَنَّهْ وَانْظُرْ إِلَى جِمَاركَ
وَلِنَجْعَلَكَ آيَةً لِلنَّاسِ وَانْظُرْ إِلَى الْعِظَامِ كَيْفَ نُنشِئُهَا ثُمَّ نَكْسُوهَا لَحْمًا فَلَمَّا تَبَيَّنَ
لَهُ قَالَ أَعْلَمْتُ أَنَّ اللَّهَ عَلَى كُلِّ شَيْءٍ قَدِيرٌ ۝ 259﴾

«Կամ նրա նման, ով անցավ մի գյուղով, որն իր
տանիքների վրա փլված էր: Նա ասաց. «Ինչպե՞ս
Ալլահը սա կկենդանացնի իր մահից հետո»: Եվ
Ալլահը նրան հարյուր տարով մահացրեց, ապա
հարույթուն տվեց: Ասաց. «Որքա՞ն մնացիր»: Նա
ասաց. «Մնացի մի օր կամ օրվա մի մասը»: Ասաց.
«Ո՛չ, դու հարյուր տարի ես մնացել: Նայիր քո
ուտելիքին ու խմելիքին, այն չի փչացել: Եվ նայիր
քո էշին: Եվ որպեսզի քեզ նշան դարձնենք
մարդկանց համար: Եվ նայիր ոսկորներին, թե
ինչպես ենք դրանք հավաքում, ապա մտով
պատում»: Եվ երբ նրա համար պարզ դարձավ,
ասաց. «Գիտեմ, որ Ալլահը ամեն բանի վրա
ունակ է»»:» [Ալ-Բակարա:259]

Հինգերորդ օրինակ. Իբրահիմ Խալիլի
պատմության մեջ, երբ նա խնդրեց Բարձրյալ
Ալլահին ցույց տալ, թե ինչպես է Նա
կենդանացնում մեռյալներին, Բարձրյալ Ալլահը
հրամայեց նրան մորթել չորս թռչուն, դրանք
մասնատել և մասերը դնել իր շուրջը գտնվող
լեռների վրա, ապա կանչել նրանց: Եվ մասերը

կմիանան միմյանց և արագ կգան Իբրահիմի մոտ: Այդ մասին Բարձրյալ Ալլահն ասում է.

﴿وَإِذْ قَالَ إِبْرَاهِيمُ رَبِّ أَرِنِي كَيْفَ تُحْيِي الْمَوْتَىٰ قَالَ أَوَلَمْ تُؤْمِنْ قَالَ بَلَىٰ وَلَٰكِن لِّيَطْمَئِنَّ قَلْبِي قَالَ فَخُذْ أَرْبَعَةً مِّنَ الطَّيْرِ فَصُرْهُنَّ إِلَيْكَ ثُمَّ أَجْعَلْ عَلَىٰ كُلِّ جَبَلٍ مِّنْهُنَّ جُزْءًا ثُمَّ ادْعُهُنَّ يَأْتِينَكَ سَعْيًا وَاعْلَمْ أَنَّ اللَّهَ عَزِيزٌ حَكِيمٌ﴾ (260)

«Եվ հիշի՛ր, երբ Իբրահիմն ասաց. «Տե՛ր իմ, ցո՛ւյց տուր ինձ, թե ինչպես ես կենդանացնում մեռյալներին»: Նա ասաց. «Մի՞թե չես հավատում»: Պատասխանեց. «Իհարկե, սակայն որպեսզի սիրտս հանգստանա»: Նա ասաց. «Ապա վերցրո՛ւ չորս թռչուն և կտոր-կտոր արա դրանց, հետո յուրաքանչյուր լեռան վրա դի՛ր նրանցից մի մաս: Այնուհետև կանչի՛ր նրանց, և նրանք շտապելով կգան քեզ մոտ: Եվ իմացի՛ր, որ Ալլահն Ամենակարող է, Ամենախիմաստուն»»: [Ալ-Բակարա:260]

Սրանք շոշափելի և իրական օրինակներ են, որոնք վկայում են մեռյալներին կենդանացնելու հնարավորության մասին: Եվ արդեն իսկ հիշատակվել է այն, ինչ Ամենակարող Ալլահը Մարիամի որդի Հիսուսի նշաններից արեց՝ մեռյալներին կենդանացնելու և նրանց իրենց գերեզմաններից հանելու գործում՝ Ամենակարող Աստծո թույլտվությամբ:

Իսկ բանականության ապացույցը երկու տեսանկյունից է.

Առաջինը՝ այն է, որ Բարձրյալ Ալլահը երկնքի և երկրի և դրանցում եղածի Արարիչն է, որոնք

ստեղծել է ի սկզբանե, և Նա, Ով ի զորու է սկզբից ստեղծել, ի զորու է նաև այն վերստեղծել: Ինչպես ասել է Բարձրյալ Ալլահը.

﴿وَهُوَ الَّذِي يَبْدَأُ الْخَلْقَ ثُمَّ يُعِيدُهُ وَهُوَ أَهْوَنُ عَلَيْهِ...﴾

